

**ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵԿՈՒՅՑ:
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՃՆՉՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Պատրաստված է

**Կանանց իրավունքների կենտրոնի համար
Երևան, Հայաստան**

**Անի Դալլաքյան և Նարինե Հակոբյան
Ավագ գիտաշխատողներ
Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան**

**Դոկտոր Լուսիկ Հ. Դանիելյան
Տնօրեն
Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն
Հայաստանի ամերիկյան համալսարան**

Մայիս 2007

Բովանդակություն

Ամփոփում..... 4

Ներածություն 7

Մեթոդաբանություն 7

Հիմնական արդյունքները..... 8

 Ընտանեկան հարաբերությունների մասին պատկերացումները..... 9

 Կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնելը 11

 Ո՞վ է ընտանիքում սովորաբար որոշում կայացնում 12

 Ընտանեկան բռնության շարժառիթների ըմբռնման մակարդակը..... 14

 Ընտանեկան բռնության պատմությունը..... 15

 Ընտանեկան բռնության և հանրային գործակալությունների նկատմամբ վերաբերմունքը... 16

 Լուծումներ, որոնք կարող են նվազեցնել ընտանեկան բռնությունը 16

 Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարող գործակալությունների հանդեպ վստահությունը..... 18

 Հայաստանում ընտանեկան բռնության և ճնշման միջադեպերը..... 19

 Բռնության միջադեպերը բացահայտելու մասին նշում 19

 Հոգեբանական ճնշման միջադեպերը..... 20

 Ֆիզիկական ճնշման միջադեպերը 22

 Ոչ ծանր ֆիզիկական ճնշում 22

 Ծանր ֆիզիկական ճնշում..... 24

 Հայաստանում ընտանեկան ֆիզիկական բռնության չափը 25

 Ո՞վ է ուժ գործադրել հարցվածի նկատմամբ 26

 Ինչպե՞ս էր հարցվածն ընկալում ամենավերջին միջադեպը..... 26

 Ինչպե՞ս է ամենավերջին միջադեպն ազդել հարցվածի վրա..... 27

 Հաղթահարել և պատասխան տալ ընտանեկան բռնությանը 28

 Բռնությանը վերջ տալու համար օգնության դիմելը 28

 Բժշկական օգնության անհրաժեշտությունը 29

 Ոստիկանություն դիմելը 29

 Հեռանալ, թե մնալ բռնացող զուգընկերոջ հետ 30

 Ընտանեկան բռնության չափի գնահատումը..... 31

Հիմնական արդյունքների ամփոփում 32

Աղյուսակներ 1-ից մինչև 68.....36

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր Ա. Կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող հարցվածների տոկոսները.....11

Գծապատկեր Բ. Որոշումների կայացմանը չմասնակցող հարցվածների տոկոսները.....13

Գծապատկեր Գ. Ընտանեկան բռնությունը նվազեցնող լուծումների գնահատականները 1-ից մինչև 10 սանդղակում.....16

Գծապատկեր Դ. Հոգեբանական ճնշման գործողությունների տոկոսները.....21

Գծապատկեր Ե. Ոչ ծանր ֆիզիկական ճնշման գործողությունների տոկոսները.....23

Գծապատկեր Զ. Ծանր ֆիզիկական ճնշման գործողությունների տոկոսները.....25

Գծապատկեր Է. Օգնության համար ոչ պաշտոնական և պաշտոնական կառույցներին դիմողների տոկոսները.....28

Ամփոփում

Երևանում գործող Կանանց իրավունքների կենտրոնը հասարակական կազմակերպությունն ակտիվորեն ներգրավված է Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշման դեմ պայքարի մեջ: Այս կազմակերպությանն անհրաժեշտ է ունենալ մեր երկրում ներկա իրավիճակի մասին վստահելի տեղեկատվություն՝ Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխման նպատակով այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են լոբբինգ, շահերի պաշտպանություն և օրենսդրության նախագծի մշակում, ձեռնարկելու համար: Պայմանագիր է կնքվել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թուրքիանյան հասարակական հետազոտությունների կենտրոնի (ԹՀՀԿ) հետ՝ Կանանց իրավունքների կենտրոնի կողմից կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխմանն ուղղված միջոցառումների մշակման համար տեղեկատվություն տրամադրելու նպատակով հարցում անցկացնելու համար: Հայաստանի ամբողջ տարածքում իրականացված այս հարցման նպատակն է հասկանալ կանանց վերաբերմունքը կանանց հանդեպ ընտանեկան բռնության նկատմամբ, պարզել դրա շարժառիթների և լուծումների ըմբռնումը, ինչպես նաև որոշել Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշման չափը: Այն նաև նպատակ ունի բացահայտելու կանանց նկատմամբ ընտանեկան ֆիզիկական բռնության վերջին միջադեպերը:

Հարցվածների 61 տոկոսը նկատել է, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն՝ նույնիսկ համաձայն չլինելու դեպքում», և ամուսնու համար կարևոր է ցույց տալ իր կնոջը, թե ով է դեկավարում տանը: Հարցվածների մոտ երկու երրորդը նշել է, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ: Մյուս կողմից, հարցվածների 78 տոկոսը չի համաձայնել, որ «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել»: Տասը հարցվածներից հինգը հայտնել են, որ իրենք արդարացնում են ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ երեխաներին անտեսելու դեպքում, տասից չորսը՝ ամուսնուն չենթարկվելու դեպքում, տասից երեքը՝ առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալու դեպքում, և տասից ևս երեքը՝ ամուսնու հետ վիճելու դեպքում: Այնուհանդերձ, հարցման գրեթե բոլոր մասնակիցները համաձայնել են, որ «ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը»:

Հարցման որոշ մասնակիցներ որոշում չեն կայացնում ընտանիքին առնչվող հարցերի մասին: Այսպես, օրինակ, տասը հարցվածներից երեքը պատասխանել են, որ չեն մասնակցում տնային տնտեսության համար խոշոր գումարների մասին որոշումների կայացմանը: Տասը հարցվածներից երկուսը չեն մասնակցում իրենց իսկ առողջության խնամքի կամ իրենց իսկ կողմից վաստակած գումարի ծախսելու շուրջ որոշումների կայացմանը:

Հարցվածների մոտ 60 տոկոսը համաձայնել է, որ «ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում»: Հարցվածների գրեթե կեսը ճանաչում է ընտանեկան բռնության ենթարկված, միջին հաշվով, չորս կանանց: Այդ հարցվածների տասից վեցը նկատել են, որ տուժածներն իրենց ծանոթներն են, տասից երեքն ասել են, որ իրենց ընկերներն ու բարեկամներն են, և տասից երկուսը հայտնել են, որ իրենց հարևաններն են: Հարցվածների մոտ 72 տոկոսը նշել է, որ «Հայաստանն ընտանեկան բռնության մասին օրենքի կարիք ունի»:

Առաջին հինգ պատճառները, որոնք հարցվածները նշել են որպես ընտանեկան բռնությունը բացատրող գործոններ, հետևյալն են. թմրադեղերի և ալկոհոլի խնդիրները, բռնարար տղամարդկանց լքել չջանկանալը կանանց կողմից, աղքատությունը, տղամարդկանց և կանանց միջև անհավասար հարաբերությունները և բռնարարների կրթության պակասը: Այնուհետև նշվել են մանկության ժամանակ բռնության ականատես լինելը, հանկարծակի

Ֆինանսական խնդիրները կամ աշխատանքի կորուստը և տուժածների կրթության պակասը: Հոգեկան հիվանդ լինելը որպես պատճառ նշվել է ամենաքիչ թվով հարցվածների կողմից:

Կանանց նկատմամբ հոգեբանական, ֆիզիկական և սեռական ճնշումը տարածված է Հայաստանում: Հարցվածների գրեթե 66 տոկոսը ենթարկվել է հոգեբանական ճնշման, ընդ որում 46 տոկոսը ենթարկվել է հաճախ կամ երբեմն: Ընդհանուր առմամբ, տասը հարցվածներից հինգի վրա գոռացել, ճչացել կամ իրենց հայհոյել են, տասը հարցվածներից երեքի տեղափոխությունները վերահսկել են, և տասը հարցվածներից ևս երեքին քննադատել են ուրիշների մոտ: Հոգեբանական ճնշման տասը միջադեպերից յոթի ժամանակ բռնարարներն ամուսիններն էին, տասը միջադեպերից մոտ երեքի ժամանակ՝ սկեսուրները: Գրեթե բոլոր հարցվածները հայտնել են, որ հոգեբանական բռնությունը նույնքան վատ է, որքան ֆիզիկականը, և հարցվածների 79 տոկոսը համաձայնել է, որ ամուսինների կողմից քննադատումը ընտանիքից դուրս ընտանեկան բռնության տեսակ է:

Հարցվածների 27 տոկոսը ենթարկվել է ոչ ծանր ֆիզիկական ճնշման, ընդ որում 16 տոկոսը ենթարկվել է հաճախ կամ երբեմն: Ընդհանուր առմամբ, տասը հարցվածներից մեկին կա՛մ ուժեղ հրել, բռնել կամ բռնել են, կա՛մ ապտակել են նրա մարմնին, ձեռքերին կամ ոտքերին, կա՛մ նրանից պահանջել են սեռական հարաբերություն ունենալ այն ժամանակ, երբ նա չէր ցանկանում, կա՛մ նրան ֆիզիկապես ստիպել են անել որևէ բան իր կամքին հակառակ: Ոչ ծանր ֆիզիկական ճնշման ևս տասը տոկոսը ներառում է այնպիսի միջադեպեր, ինչպիսիք են պատերին կամ կահույքին բռունցքով կամ ոտքով հարվածելը և կնոջ վրա կամ սենյակի մեջ իրեր շարտելը: Ոչ ծանր ֆիզիկական ճնշման տասը միջադեպերից ութը տեղի են ունեցել ամուսինների պատճառով, տասը միջադեպերից մոտ երկուսը՝ սկեսուրների:

Հարցվածների մոտ 12 տոկոսը ենթարկվել է ծանր ֆիզիկական ճնշման, ընդ որում վեց տոկոսը ենթարկվել է հաճախ կամ երբեմն: Ընդհանուր առմամբ, հարցվածների հինգ տոկոսի ձեռքերը ոլորել են, մազերը՝ քաշել, և հինգ տոկոսի երեխաներին հարվածել կամ վնասել են, և մեկ այլ հինգ տոկոսին ստիպել են սեռական հարաբերությունների մեջ մտնել: Ծանր ֆիզիկական ճնշման տասը միջադեպերից գրեթե ինը տեղի են ունեցել ամուսինների պատճառով, իսկ տասը միջադեպերից մեկի ժամանակ սկեսուրներն են ֆիզիկական ուժ գործադրել իրենց հարսերի նկատմամբ:

Չնայած որ տասը հարցվածներից գրեթե երեքը տանը ենթարկվել են ֆիզիկական ճնշման (ընդ որում տասից մոտ երկուսը՝ հաճախ կամ երբեմն), հարցվածների մոտ 35 տոկոսն է միայն կարծում, որ այն, ինչ տեղի է ունեցել ամենավերջին միջադեպի ժամանակ, իրենց դարձնում է ընտանեկան բռնության գոհ: Դեռ ավելին, հարցվածների գրեթե կեսը կարծում է, որ իրենք մասամբ մեղավոր են այդ ամենավերջին միջադեպի ժամանակ պատահածի համար: Բռնության ենթարկված հարցվածների մոտ 40 տոկոսը հայտնել է, որ երեխաներն ականատես են եղել բռնության: Այդ միջադեպը ազդել է հարցվածների վրա. բռնության ենթարկված տասը հարցվածներից ութը զայրացած էին, տասը հարցվածներից մոտ հինգի ինքնազնադատականը իջել էր, և հինգը դեպրեսիայի մեջ էին, և մեկ այլ հինգը ունեին ամոթի զգացում այդ միջադեպի պատճառով: Հարցվածների 60 տոկոսը նշել է, որ իրենք կարող են ինչ-որ բան անել՝ իրենց հանդեպ բռնությունը դադարեցնելու համար:

Բռնության ենթարկված հարցվածների 29 տոկոսն է միայն դիմել որևէ մեկի օգնությանը՝ բռնությանը վերջ տալու համար, և այդ օգնության համար իրենք մեծ մասամբ դիմել են ընտանիքի անդամներին: Ընտանեկան բռնության հետևանքով ստացված վնասվածքների պատճառով տասը հարցվածներից մոտ մեկը դիմել է բժշկական օգնության համար: Հարցվածների վեց տոկոսը դիմել է ոստիկանություն: Ոստիկանության միջամտության տասը դեպքերից մոտ ութի ժամանակ բռնարարը ստորագրել է մի փաստաթուղթ, որ բռնությունը չի կրկնվի, որից հետո ազատ է արձակվել:

Տասը հարցվածներից մոտ երեքը լքել են իրենց զուգընկերներին, քանի որ նրանք բռնացել կամ սպառնացել են իրենց: Այդ դեպքերի 90 տոկոսը վերջացել է նրանով, որ բռնության ենթարկված հարցվածները վերջիվերջո վերադարձել են տուն:

Պարզվել է, որ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը հավասարապես են բաշխված Հայաստանում՝ տարիքի, եկամտի, զբաղվածության կարգավիճակի և կրթական մակարդակի հիման վրա ստեղծված խմբերի միջև: Այսպիսով, այս գործոնների հիման վրա վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ մեծ մասամբ չեն գտնվել բռնության և ճնշման դեպքերի առումով:

Ընտանեկան բռնության և ճնշման իրական չափը կարող է ավելի բարձր լինել: ԹՀՀԿ-ի հարցազրուցավարները կարծում են, որ առկա է տեղեկությունների քողարկում. այդպես, օրինակ, որոշ կանայք հրաժարվում էին հարցմանը մասնակցելուց, քանի որ, ինչպես իրենք էին ասում, իրենց անուսինները կգայրանային: Կային նաև կանայք, ովքեր պատասխանում էին «ոչ», չնայած որ իրենց աչքերը հակառակն էին ցույց տալիս: Դժբախտաբար, բազմաթիվ սոցիալական արգելքներ, կարծես, խոչընդոտում են որոշ կանանց բացահայտելու ընտանեկան բռնության իրենց փորձը ուրիշների մոտ:

Ներածություն

Երևանում գործող Կանանց իրավունքների կենտրոն հասարակական կազմակերպությունն ակտիվորեն ներգրավված է Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշման դեմ պայքարի մեջ: Այս կազմակերպությանն անհրաժեշտ է ունենալ մեր երկրում ներկա իրավիճակի մասին վստահելի տեղեկատվություն՝ Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխման նպատակով այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են լոբբինգ, շահերի պաշտպանություն և օրենսդրության նախագծի մշակում, ձեռնարկելու համար: Այդ սոցիալական խնդիրը մնում է քողարկված և վատ ուսումնասիրված, իսկ կառավարական պաշտոնյաները չեն ընդունում, որ այն լուրջ և տարածված խնդիր է Հայաստանում: Պայմանագիր է կնքվել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոնի (ԹՀԳԿ) հետ՝ Կանանց իրավունքների կենտրոնի կողմից կանանց նկատմամբ ընտանեկան բռնության կանխմանն ուղղված միջոցառումների մշակման համար տեղեկատվություն տրամադրելու նպատակով հարցում անցկացնելու համար: Հայաստանի ամբողջ տարածքում իրականացված այս հարցման նպատակն է հասկանալ կանանց վերաբերմունքը կանանց հանդեպ ընտանեկան բռնության նկատմամբ, պարզել դրա շարժառիթների և լուծումների ըմբռնումը, ինչպես նաև որոշել Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշման չափը: Այն նաև նպատակ ունի բացահայտելու կանանց նկատմամբ ընտանեկան ֆիզիկական բռնության վերջին միջադեպերը:

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը սահմանում է բռնությունը կանանց նկատմամբ որպես «սեռական հատկանիշով բռնության ցանկացած գործողություն, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, ներառյալ նմանատիպ գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ բռնի ազատազրկումը թե՛ հասարակական, թե՛ անձնական կյանքում»: Հռչակագիրը նշում է, որ կանանց նկատմամբ բռնությունն ընդգրկում է երեք ոլորտ, չնայած որ չի սահմանափակվում դրանցով՝ «ընտանիքում տեղի ունեցող», «լայն հասարակության մեջ» և «պետության կողմից իրականացվող կամ թույլատրվող» բռնություն¹:

Մեթոդաբանություն

Հայաստանի 18-ից մինչև 75 տարեկան կանանց ներկայացուցչական ընտրանքը որոշելու համար ԹՀԳԿ-ն դիմել է ՀՀ վիճակագրական ազգային ծառայությանը՝ հետևյալ պարամետրերի վերաբերյալ գոյություն ունեցող տեղեկատվությունն ստանալու համար. 1) բնակչության թիվը՝ մարզային կտրվածքով, 2) տասը մարզերից յուրաքանչյուրի բնակչության թիվը՝ գյուղական և քաղաքային բնակիչների կտրվածքով և 3) Երևանի բնակչության թիվը՝ ըստ տասներկու համայնքների: Տնային տնտեսություններն ընտրվել են Երևան քաղաքից և տասը մարզերից համամասնորեն՝ արտացոլելով ՀՀ վերջին մարդահամարի տվյալները: Հարցման մեջ ընդգրկելու նպատակով յուրաքանչյուր մարզից ընտրվել են մեկ քաղաք և մեկ գյուղ: ԹՀԳԿ-ն տասը քաղաքներից յուրաքանչյուրի համար ՀՀ Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոնից ձեռք է բերել մանրամասն քարտեզներ²: Երևանի դեպքում օգտագործվել է քաղաքի քարտեզը, որում պատկերված են շենքերը՝ ըստ համայնքների: ԹՀԳԿ-ն դիմել է տասը մարզային քաղաքներին և Երևանի տասներկու համայնքներին՝ որոշելու համար բազմաբնակարան շենքերի և սեփական առանձնատների

¹ Տե՛ս 1993-ի դեկտեմբերի 20-ին 48/104 բանաձևով Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Հռչակագրի հոդվածներ 1 և 2:

² Դրանք ի սկզբանե պատրաստվել են ՀՀ 2001-ի մարդահամարի համար:

համամասնությունը: Մարզային յուրաքանչյուր քաղաքի և Երևանի յուրաքանչյուր համայնքի համար օգտագործվել են քարտեզներ՝ շենքերը պատահականորեն ընտրելու համար: Տասը քաղաքներում և Երևանում՝ արդեն տեղում, յուրաքանչյուր բազմաբնակարան շենքից պատահականորեն ընտրվել է մեկ տնային տնտեսություն: ԹՀԿ-ն դիմել է տասը գյուղերի գյուղապետարաններին՝ տնային տնտեսությունների թիվը որոշելու համար, և տնային տնտեսությունները տեղում ընտրվել են պատահականորեն:

Տնային տնտեսությունների ներսում հարցվածներն ընտրվել են պատահականորեն: Սակայն, հաշվի առնելով այս հետազոտության հատուկ նպատակները՝ ընտրանքի մեջ ընդգրկվել են միայն ամուսնացած կամ զուգընկեր ունեցող կանայք: Հարցվածները տեղեկացվել են, որ պատասխանների անանունությունը երաշխավորվում է: Ի լրումն, հարցազրույցների սկզբում հարցվածներին ցույց են տրվել հարցաթերթիկները՝ նրանց հավաստիացնելու համար, որ իրենց անունները կամ հասցեները ոչ մի տեղ չեն գրանցվում:

ԹՀԿ-ն մշակել է չափորոշիչներ ու հատուկ այդ նպատակով կազմված հարցաթերթիկ՝ Կանանց իրավունքների կենտրոնի կողմից պահանջվող տեղեկատվության հիման վրա: Չափորոշիչներ մշակելիս ԹՀԿ-ն փորձել է գտնել կանանց նկատմամբ ընտանեկան բռնության ոլորտում անցկացված համապատասխան հարցումներ, որոնք ունենան վստահելի և ճշգրիտ չափորոշիչներ: Հարցաթերթիկի բոլոր չափորոշիչները փորձարկվել են, և արվել են համապատասխան շտկումներ: Ընդհանուր հաշվով 2007-ի մայիսի 5-ից մինչև մայիսի 20-ը անց է կացվել 1,006 դեմ առ դեմ հարցազրույց: Աղյուսակներ 1, 2 և 3-ը ցույց են տալիս անցկացված հարցազրույցների թիվը՝ մարզային կտրվածքով, ինչպես նաև քաղաքային և գյուղական ընտրանքներում ընդգրկված տնային տնտեսությունների թիվը: Ըստ անհրաժեշտության՝ որակական տվյալները կողավորվել են, և բոլոր տվյալները մուտքագրվել են SPSS (վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար) վերլուծության համար:

Հարցազրույցավարները նաև գրանցել են, թե արդյոք իրենք հարցազրույցներն անց են կացրել այլ անձանց ներկայությամբ: Հարցազրույցների 84 տոկոսը անց է կացվել, երբ ուրիշ անձինք ներկա չէին: Հարցազրույցների երկու տոկոսը անց է կացվել հարցվածների ամուսինների կամ զուգընկերների ներկայությամբ: Հարցազրույցների հինգ տոկոսի ժամանակ ներկա էին տնային տնտեսության այլ մեծահասակ անդամները, մինչդեռ հարցազրույցների ևս հինգ տոկոսի ժամանակ ներկա էին երեխաները:

Մերժման տոկոսը 14.8 է: Հարցմանը մասնակցել չցանկացողների 77 տոկոսը պատճառաբանել էր, որ իրենք զբաղված են: Տասնութ տոկոսի համար հարցման թեման հետաքրքիր չէր: Երեք տոկոսը վախեցած էր, որ իրենց անուսինները կգայրանան:

Հարցազրույցների վերջում հարցման մասնակիցներին տրամադրվել են կանանց նկատմամբ ընտանեկան բռնության մասին տեղեկատվական թերթիկներ և թեժ գծի հեռախոսահամարով օրացույցներ:

Հիմնական արդյունքները

Այս բաժինն ամփոփում է հարցման արդյունքները և բաղկացած է հինգ ենթաբաժիններից. ընտանեկան հարաբերությունների մասին պատկերացումները, ընտանեկան բռնության շարժառիթների ըմբռնման մակարդակը, ընտանեկան բռնության և հանրային գործակալությունների նկատմամբ վերաբերմունքը, Հայաստանում ընտանեկան բռնության և ճնշման միջադեպերը և Հայաստանում ընտանեկան ֆիզիկական բռնության չափը:

Հարցվածների միջին տարիքը 40 է³ (տե՛ս Աղյուսակ 62): Հարցվածների մոտ 37 տոկոսն ավարտել է 10-ամյա միջնակարգ դպրոց, 63 տոկոսը հաճախել է կամ ավարտել է համալսարան, քոլեջ/ուսումնարան կամ տեխնիկում⁴ (տե՛ս Աղյուսակ 63): Հարցվածների 35 տոկոսը աշխատում էր ամբողջ կամ կես դրույքով, ներառյալ ինքնագրավածությունը (տե՛ս Աղյուսակ 64): Հարց էր նաև տրվել տնային տնտեսության նախորդ ամսվա ընդհանուր եկամտի մասին⁵, և նշված գումարը կազմում էր 5,000-ից մինչև 700,000 ՀՀ դրամ՝ միջին հաշվով լինելով 95,998 ՀՀ դրամ մեկ տնային տնտեսության հաշվարկով⁶ (տե՛ս Աղյուսակ 65):

Հարցվածների 89 տոկոսն ամուսնացած է, մինչդեռ գրեթե վեց տոկոսը երբեք ամուսնացած չի եղել, և մոտ երեք տոկոսն ամուսնալուծված էր (տե՛ս Աղյուսակ 66): 899 ամուսնացած կանայք այդ կարգավիճակում են, միջին հաշվով, 20 տարի (տե՛ս Աղյուսակ 66ա):

Հարցվածների 88 տոկոսն ունի երեխաներ (տե՛ս Աղյուսակ 67), և նրանց տարիքը տատանվում է մեկ ամսեկանից է մինչև 57 տարեկան՝ միջին հաշվով լինելով 19 տարեկան: Հարցվածների մոտ 12 տոկոսը վերջին տարվա ընթացքում հղի էր (տե՛ս Աղյուսակ 68):

Տվյալների մեծամասնության համար օգտագործվել են վիճակագրական թեստեր՝ պարզելու համար, թե արդյոք գոյություն ունեն տարբերություններ քաղաքների և գյուղերի, Երևանի և տասը մարզերի՝ Երևանից դուրս քաղաքների բնակիչների միջև, ինչպես նաև տարբերություններ՝ տարիքի, զբաղվածության կարգավիճակի, եկամտի և կրթական մակարդակի հիման վրա: Եթե վիճակագրական տեսանկյունից նշանակալի արդյունքներ գոյություն ունեն, ապա դրանք ընդգրկված են վերլուծության այս բաժնում⁷:

Ընտանեկան հարաբերությունների մասին պատկերացումները

Հարցվածների 61 տոկոսը նշել է, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն՝ նույնիսկ համաձայն չլինելու դեպքում» (տե՛ս Աղյուսակներ 13գ և 14): Գյուղական բնակիչները (75 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան քաղաքային բնակիչները (54 տոկոս), և տասը մարզերի՝ Երևանից դուրս քաղաքների բնակիչները (67 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան Երևանի բնակիչները (43 տոկոս)⁸: Ավելին, առկա է միջին դրական համահարաբերակցություն (կոռելացիա) այդ ձևակերպման և տնային տնտեսության ամսեկան եկամտի միջև. ավելի բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսություններից հարցվածներն ավելի հակված են չհամաձայնելու⁹:

³ Մեկ 78 տարեկան և երկու 17 տարեկան ամուսնացած կանայք ընդգրկվել են ընտրամքի մեջ, թեև նախատեսված տարիքն էր 18-ից մինչև 75-ը:

⁴ Կրթական մակարդակի հիման վրա վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ գտնելու նպատակով այդ չափորոշիչը կոդավորվել է երկու կատեգորիայի. դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածներ և դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածներ:

⁵ Ներառյալ բոլոր աշխատավարձերը, ինքնագրավածությունից և այլ աղբյուրներից ստացված եկամուտները, ներառյալ թոշակները և ընկերների, բարեկամների և պետության կողմից ստացված օգնությունը, 2007-ի ապրիլին

⁶ Միջին փոխարժեքը 2007-ի ապրիլին՝ 363 ՀՀ դրամ = 1 ԱՄՆ դոլար:

⁷ Պետք է նշել, որ Երևանի բոլոր բնակիչներն ավելի կրթված են, ավելի շատ են ապահովված աշխատանքով և տնային տնտեսության առումով ունեն ավելի բարձր եկամուտ, քան մարզերի՝ Երևանից դուրս քաղաքների բնակիչները: Նույն տարբերությունը նկատելի է քաղաքային և գյուղական բնակիչների միջև: Այնուհանդերձ, այս նմանություններն ազդեցություն չեն ունեցել կանանց նկատմամբ բռնության և ճնշման միջադեպերի մասին պատասխանների վրա:

⁸ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.000 մակարդակում:

⁹ Պիրսոնի կոռելացիոն վերլուծությունը հավասար է 0.291, նշանակալիության 0.000 մակարդակում:

Հարցվածների ևս 61 տոկոսը նկատել է, որ ամուսնու համար կարևոր է ցույց տալ իր կնոջը, թե ով է ղեկավարում տանը (տե՛ս Աղյուսակ 13է): Հարցվածների 39 տոկոսն է միայն համաձայնել այն ձևակերպմանը, որ կինը պետք է հնարավորություն ունենա ընտրել իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում (տե՛ս Աղյուսակ 13ը): Քաղաքային բնակիչները (45 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան գյուղական բնակիչները (30 տոկոս), և Երևանի բնակիչները (50 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան այլ քաղաքների բնակիչները (39 տոկոս)¹⁰:

Մյուս կողմից, հարցվածների 22 տոկոսն է միայն հայտնել, որ «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել» (տե՛ս Աղյուսակ 13ե): Գյուղական բնակիչները (27 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, որ ամուսինները կարող են արգելել կանանց աշխատել, քան քաղաքային բնակիչները (19 տոկոս)¹¹:

Հարցվածների 36 տոկոսը համաձայնել է, որ «կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություններ ունենալ ամուսնու հետ՝ նույնիսկ չցանկանալու դեպքում» (տե՛ս Աղյուսակ 13թ), ընդ որում գյուղական բնակիչները (48 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան քաղաքային բնակիչները (30 տոկոս), և այլ քաղաքների բնակիչները (41 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան Երևանի բնակիչները (21 տոկոս)¹²:

Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ են հայտնաբերվել այդ բոլոր հինգ հարցերի առումով կրթության հիման վրա¹³: Դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածներն ավելի հակված են համաձայնելու, քան որևէ հաստատություն ավարտած հարցվածները, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն՝ նույնիսկ համաձայն չլինելու դեպքում» (81 տոկոս ի տարբերություն 50 տոկոսի), «ամուսնու համար կարևոր է ցույց տալ իր կնոջը, թե ով է ղեկավարում տանը» (67 տոկոս ի տարբերություն 58 տոկոսի), «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել» (35 տոկոս ի տարբերություն 15 տոկոսի), և «կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություններ ունենալ ամուսնու հետ՝ նույնիսկ չցանկանալու դեպքում» (46 տոկոս ի տարբերություն 31 տոկոսի): Մյուս կողմից, դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (46 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այն ձևակերպմանը, որ «կինը պետք է հնարավորություն ունենա ընտրել իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում», քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (28 տոկոս):

Նմանապես, վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ են նկատվել այդ բոլոր հինգ հարցերի առումով զբաղվածության հիման վրա¹⁴: Աշխատանք չունեցող հարցվածներն ավելի հակված են համաձայնելու, քան աշխատանք ունեցող հարցվածները, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն՝ նույնիսկ համաձայն չլինելու դեպքում» (70 տոկոս ի տարբերություն 45 տոկոսի), «ամուսնու համար կարևոր է ցույց տալ

¹⁰ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

¹¹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.000 մակարդակում:

¹² Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.000 մակարդակում:

¹³ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.000 մակարդակում:

¹⁴ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:


իր կնոջը, թե ով է ղեկավարում տանը» (62 տոկոս ի տարբերություն 59 տոկոսի), «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել» (27 տոկոս ի տարբերություն 13 տոկոսի), և «կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություններ ունենալ ամուսնու հետ՝ նույնիսկ չցանկանալու դեպքում» (39 տոկոս ի տարբերություն 33 տոկոսի): Մյուս կողմից, աշխատանք ունեցող հարցվածները (53 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այն ձևակերպմանը, որ «կինը պետք է հնարավորություն ունենա ընտրել իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում», քան աշխատանք չունեցող հարցվածները (32 տոկոս):

Կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնելը

Հարցերի առանձին շարքի օգնությամբ փորձ է արվել պարզելու, թե արդյոք, հարցվածների կարծիքով, ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ արդարացված է (տե՛ս Աղյուսակներ 11ա-11է և Աղյուսակ 12): Գծապատկեր Ա-ն ներկայացնում է կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող հարցվածների տոկոսները:

Հարցվածների 67 տոկոսը համաձայնել են, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ, ընդ որում 36 տոկոսը խիստ համաձայն է այդ կարծիքին: Հարցվածների կեսից մի փոքր ավելին կարծում է, որ երեխաներին անտեսելը ֆիզիկական ուժն արդարացնող պատճառ է: Այնուհետև նշվել են ամուսնուն չենթարկվելը (43 տոկոս), առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալը (31 տոկոս), ամուսնու հետ վիճելը (29 տոկոս), սեռական հարաբերություններ մերժելը (21 տոկոս) և տնային գործերը ոչ պատշաճ կատարելը (14 տոկոս):

Գծապատկեր Ա. Կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող հարցվածների տոկոսները



Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ են գտնվել այդ յոթ չափորոշիչներից յուրաքանչյուրի համար քաղաքային և գյուղական բնակիչների միջև, ընդ որում գյուղական բնակիչներն ավելի հակված են համաձայնելու, քան քաղաքային բնակիչները, որ այդ պատճառներից յուրաքանչյուրն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ: Ի լրումն, այլ քաղաքների բնակիչներն ավելի հակված են արդարացնելու ֆիզիկական ուժի գործադրումը այդ բոլոր պատճառներից ելնելով, քան Երևանի բնակիչները: Բացի այդ, վիճակագրական տեսանկյունից նշանակալի

տարբերություններ գոյություն ունեն կրթության և զբաղվածության հիման վրա ստեղծված խմբերի միջև¹⁵:

Ավելի շատ գյուղական (80 տոկոս), քան քաղաքային բնակիչներ (60 տոկոս), և ավելի շատ այլ քաղաքների բնակիչներ (73 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (48 տոկոս) կարծում, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ: Նմանապես, ավելի շատ գյուղական (64 տոկոս), քան քաղաքային բնակիչներ (46 տոկոս), և գրեթե երկու անգամ ավելի շատ այլ քաղաքների բնակիչներ (60 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (34 տոկոս) արդարացնում ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ, եթե նրանք անտեսում են երեխաներին: Ավելի շատ գյուղական (58 տոկոս), քան քաղաքային բնակիչներ (35 տոկոս), և շատ ավելի այլ քաղաքների բնակիչներ (50 տոկոս), քան Երևանի բնակիչներ են (22 տոկոս) կարծում, որ ամուսնուն չենթարկվելը ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող պատճառ է:

Ավելի շատ դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածներ (77 տոկոս), քան որևէ հաստատություն ավարտած հարցվածներ են (61 տոկոս) արդարացնում ֆիզիկական ուժի գործադրումը այն կանանց նկատմամբ, ովքեր հավատարիմ չեն: Նմանապես, ավելի շատ ոչ մի հաստատություն չավարտած հարցվածներ (62 տոկոս), քան որևէ հաստատություն ավարտած հարցվածներ են (47 տոկոս) կարծում, որ երեխաներին անտեսելը կանանց նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումն արդարացնող պատճառ է: Ավելի շատ ոչ մի հաստատություն չավարտած հարցվածներ (55 տոկոս), քան որևէ հաստատություն ավարտած հարցվածներ են (36 տոկոս) նշում, որ ամուսինները կարող են ուժ գործադրել իրենց կանանց նկատմամբ, եթե նրանք իրենց չեն ենթարկվում:

Զբաղվածության կարգավիճակը նույնպես գործոն է: Ավելի շատ աշխատանք չունեցող հարցվածներ (73 տոկոս), քան աշխատանք ունեցող հարցվածներ են (56 տոկոս) կարծում, որ ամուսինները կարող են ֆիզիկական ուժ գործադրել իրենց կանանց նկատմամբ, եթե նրանք հավատարիմ չեն:

Միևնույն ժամանակ, գրեթե բոլոր հարցվածները (92 տոկոս) հայտնել են, որ «ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը», ընդ որում 69 տոկոսը խիստ համաձայն է այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակ 4է): Քաղաքային բնակիչները (94 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան գյուղական բնակիչները (88 տոկոս): Դեռ ավելին, դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (95 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (87 տոկոս)¹⁶:


Ո՞վ է ընտանիքում սովորաբար որոշում կայացնում

Հարցվածներին տրվել են մի շարք բաց հարցեր՝ պարզելու համար, թե ով է սովորաբար որոշում կայացնում իրենց ընտանիքներում ընտանիքին առնչվող հարցերի մասին: Պատասխանները դասակարգվել են չորս խմբի և ներկայացված են Աղյուսակ 8-ում: Գծապատկեր Բ-ում տրված են որոշումների կայացմանը չմասնակցող հարցվածների տոկոսները:

¹⁵ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

¹⁶ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

Գծապատկեր Բ. Որոշումների կայացմանը չմասնակցող հարցվածների տոկոսները



Հարցվածներից շատերը որոշում են առանց ուրիշների միջամտության, թե ինչ ճաշ պատրաստել ամեն օր (74 տոկոս), մինչդեռ ավելի քչերն են ինքնուրույն որոշում, թե ինչպիսի գնումներ կատարել տնային տնտեսության համար ամեն օր (58 տոկոս):

Հարցվածների 43 տոկոսը խոշոր գնումներ է կատարում տնային տնտեսության համար՝ դրանք իրենց ամուսինների կամ զուգընկերների հետ քննարկելուց հետո: Հարցվածների մոտ 30 տոկոսը մասնակցություն չունի տնային տնտեսության համար խոշոր գնումների վերաբերյալ որոշումների կայացմանը, մինչդեռ հարցվածների ինը տոկոսը մասնակցում է այդ որոշումների կայացմանը ընտանիքի բոլոր այլ անդամների հետ համատեղ:

Հարցվածների 25 տոկոսն ասում է, որ իրենք ինքնուրույն են որոշում, թե ինչպես օգտագործել իրենց իսկ կողմից վաստակած գումարը: Հարցվածների 32 տոկոսը որոշում է, թե ինչպես օգտագործել իրենց կողմից վաստակած գումարը, իրենց ամուսինների կամ զուգընկերների հետ համատեղ: Հարցվածների գրեթե 21 տոկոսը չի մասնակցում այդ ծախսերի շուրջ որոշումների կայացմանը, մինչդեռ մոտ հինգ տոկոսը այդպիսի որոշումներ է կայացնում ընտանիքի բոլոր անդամների միջամտությամբ:

Հարցվածների 38 տոկոսն է միայն հայտնում, որ իրենք ինքնուրույն են որոշում իրենց առողջության խնամքի հետ կապված հարցերը: Ավելի շատ քաղաքային (41 տոկոս), քան գյուղական բնակիչներ (34 տոկոս), և ավելի շատ երևանի բնակիչներ (45 տոկոս), քան այլ քաղաքների բնակիչներ են (35 տոկոս) ինքնուրույն որոշումներ կայացնում այդ հարցերի վերաբերյալ: Նմանապես, ավելի շատ դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածներ (42 տոկոս), քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածներ (32 տոկոս), և շատ ավելի աշխատանք ունեցող հարցվածներ (48 տոկոս), քան աշխատանք չունեցող հարցվածներ են (33 տոկոս) ինքնուրույն որոշումներ կայացնում այդ հարցերի մասին¹⁷: Հարցվածների մոտ 35 տոկոսը որոշումներ է կայացնում իրենց առողջության

¹⁷ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05:

խնամքի հետ կապված հարցերի վերաբերյալ իրենց ամուսինների կամ զուգընկերների հետ համատեղ, մինչդեռ հարցվածների գրեթե 20 տոկոսն ընդհանրապես չի մասնակցում այդ հարցերի շուրջ որոշումների կայացմանը:

Հարցվածների 25 տոկոսն ինքնուրույն է որոշում, թե քանի երեխա ունենալ: Հարցվածների 60 տոկոսը որոշում է երեխաների թիվը իրենց ամուսինների կամ զուգընկերների հետ համատեղ: Հարցվածների ինը տոկոսը հայտնում է, որ ընտանիքի այլ անդամներն են որոշում՝ առանց իրենց միջամտության, թե իրենք քանի երեխա պետք է ունենան:

Ընտանեկան բռնության շարժառիթների ընթացման մակարդակը

Մի քանի հարցի օգնությամբ փորձ է արվել իմանալու ընտանեկան բռնության պատճառների ընթացումը հարցվածների կողմից:

Հարցվածների մոտ 92 տոկոսը նշել է, որ «թմրադեղերի և ալկոհոլի խնդիրները ընտանեկան բռնության առաջնային պատճառներն են», ընդ որում 62 տոկոսը հայտնել է, որ խիստ համաձայն է (տե՛ս Աղյուսակներ 9ը և 10):

Հարցվածների մոտ 88 տոկոսը կարծում է, որ «ընտանեկան բռնությունը շարունակվում է, քանի որ կանանց մեծամասնությունը չի լքում իրենց բռնացող տղամարդկանց», ընդ որում գրեթե 37 տոկոսը նշում է, որ խիստ համաձայն է (տե՛ս Աղյուսակ 9է):

Հարցվածների մոտ 87 տոկոսը հայտնել է, որ աղքատությունը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը, ընդ որում 54 տոկոսը խիստ համաձայնել են այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակ 9ա): Ավելի կոնկրետ, հարցվածների 74 տոկոսը նշել է, որ հանկարծակի ֆինանսական խնդիրները կամ աշխատանքի կորուստը ընտանեկան բռնության պատճառներ են: Մոտ 38 տոկոսը խիստ համաձայնել է այդ կարծիքին (տե՛ս Աղյուսակ 9դ): Հանկարծակի ֆինանսական խնդիրների կամ աշխատանքի կորստի մասին այս չափորոշիչի դեպքում վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն գոյություն ունի զբաղվածության հիման վրա. աշխատանք չունեցող հարցվածները (76 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան աշխատանք ունեցող հարցվածները (71 տոկոս), որ դրանք ընտանեկան բռնություն առաջացնող գործոններ են¹⁸:

Հարցվածների մոտ 86 տոկոսը կարծում է, որ «ընտանեկան բռնությունը տղամարդկանց և կանանց միջև անհավասար հարաբերությունների արդյունք է» (տե՛ս Աղյուսակ 9ժ):

Հարցվածների մոտ 79 տոկոսը համաձայնել է, որ «բռնացողի կրթության պակասը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը», ընդ որում հարցվածների գրեթե 42 տոկոսը խիստ համաձայն է (տե՛ս Աղյուսակ 9գ): Դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (83 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ կարծիքին, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (70 տոկոս): Դեռ ավելին, քաղաքային բնակիչները (82 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան գյուղական բնակիչները (73 տոկոս)¹⁹:

¹⁸ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.024 մակարդակում:

¹⁹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

Ինչ վերաբերում է ընտանեկան բռնության զոհին, հարցվածների 72 տոկոսը նշել է, որ «տուժածի կրթության պակասը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը», ընդ որում 33 տոկոսը խիստ համաձայնել է այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակ 9բ): Դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (76 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (66 տոկոս): Նմանապես, քաղաքային բնակիչները (74 տոկոս) փոքր-ինչ ավելի հակված են համաձայնելու այդ կարծիքին, քան գյուղական բնակիչները (69 տոկոս)²⁰:

Հարցվածների մոտ 77 տոկոսը նկատել է, որ «չատ տղամարդիկ սովորում են բռնություն կիրառել, քանի որ իրենք ականատես են եղել բռնության՝ մանկության ընթացքում իրենց տանը», ընդ որում 34 տոկոսը խիստ համաձայնել է այդ մտքին (տե՛ս Աղյուսակ 9թ):

Հարցվածների գրեթե 71 տոկոսը նշել է, որ «ընտանեկան բռնությունը գոյություն ունի, քանի որ ամուսնու ընտանիքն այն թույլ է տալիս» (տե՛ս Աղյուսակ 9ի): Հարցվածների 62 տոկոսը հայտնել է, որ «ընտանեկան բռնությունը գոյություն ունի, քանի որ ոստիկանությունը այն չի դադարեցնում» (տե՛ս Աղյուսակ 9լ):

Հարցվածների 53 տոկոսը նկատել է, որ «այն տղամարդիկ, ովքեր ծեծում են իրենց կանանց, հիմնականում հոգեկան հիվանդ են»: Այդ հարցվածների գրեթե կեսը խիստ համաձայնել է այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակ 9ե):

Ընտանեկան բռնության պատմությունը

Հարցվածներին խնդրել են պատասխանել, թե արդյոք իրենց հայրերը և սկեսրայրները երբևէ բռնացել են համապատասխանաբար իրենց մայրերի և սկեսուրների հանդեպ: Հարցվածների 12 տոկոսը նշել է, որ իրենց հայրերը բռնացել են իրենց մայրերի հանդեպ, և հարցվածների 16 տոկոսը հայտնել է, որ իրենց սկեսրայրները կամ զուգընկերների հայրերը բռնացել են իրենց սկեսուրների կամ զուգընկերների մայրերի հանդեպ (եթե չընդգրկենք «չունեն հայր», «չունեն սկեսրայր/զուգընկերը չունի հայր» և «չգիտեն» պատասխանները) (տե՛ս Աղյուսակներ 60 և 61):

Մոտ 62 տոկոսը այն հարցվածների, ում սկեսրայրները բռնացել են սկեսուրների հանդեպ, հայտնել է, որ իրենք հոգեբանական ճնշման են նթարկվել իրենց ամուսինների կողմից: Դեռ ավելին, գրեթե 45 տոկոսը այն հարցվածների, ում սկեսրայրները ուժ են գործադրել սկեսուրների նկատմամբ, հայտնել է, որ իրենք ֆիզիկական ճնշման են ենթարկվել իրենց ամուսինների կողմից:

Պատասխանելով երեխաների վրա ընտանեկան բռնության ազդեցության մասին հարցին՝ հարցվածների մոտ 80 տոկոսը նշել է, որ «չատ հավանական է, որ ամուսինը, որը բռնանում է իր կնոջ հանդեպ, բռնանա նաև իր երեխաների հանդեպ» (տե՛ս Աղյուսակ 9զ): Քաղաքային բնակիչները (83 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ մտքին, քան գյուղական բնակիչները (75 տոկոս)²¹:

²⁰ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

²¹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.012 մակարդակում:

Ընտանեկան բռնության և հանրային գործակալությունների նկատմամբ վերաբերմունքը


Մի քանի հարց է տրվել՝ հարցվածների վերաբերմունքն ընտանեկան բռնության հնարավոր լուծումների նկատմամբ պարզելու, ինչպես նաև Հայաստանում կանանց նկատմամբ բռնության հարցերով զբաղվող տարբեր գործակալությունների հանդեպ հարցվածների վստահության մակարդակն իմանալու համար:

Լուծումներ, որոնք կարող են նվազեցնել ընտանեկան բռնությունը

Մի շարք հարցերի միջոցով հարցվածներին խնդրել են 1-ից (բոլորովին ոչ արդյունավետ) մինչև 10 (շատ արդյունավետ) սանդղակի օգնությամբ գնահատել վեց լուծումների արդյունավետությունը, այն լուծումների, որոնք կարող են նվազեցնել ընտանեկան բռնությունը:

Հարցվածներն ամենաբարձր գնահատականը տվել են հանրային կրթության միջոցով իրազեկության բարձրացմանը (միջինը=8.5): Հետևյալ լուծումներն ստացել են փոքր-ինչ ավելի ցածր գնահատականներ. տուժածին հոգեբանական խորհրդատվության տրամադրում (միջինը=7.5), բռնարարին հոգեբանական խորհրդատվության տրամադրում (միջինը=7.4) և ընտանեկան բռնության տուժածներին ավելի շատ օժանդակության տրամադրում (միջինը=7.2) (տե՛ս Աղյուսակներ 15ա-15գ և Աղյուսակ 16):

Գծապատկեր 9. Ընտանեկան բռնությունը նվազեցնող լուծումների գնահատականները 1-ից մինչև 10 սանդղակում



Ավելի շատ ապաստարաններ բացելը (միջինը=6.1) և մեղավոր ճանաչվածներին բանտարկելը (միջինը=5.5) համարվել են ավելի քիչ արդյունավետ: Միջին գնահատականները նվազման կարգով ներկայացված են Գծապատկեր 9-ում: Հարցվածների մոտ վեց տոկոսը չի կարողացել պատասխանել, թե որքանով է արդյունավետ ավելի շատ ապաստարաններ բացելը:

Գյուղական բնակիչները քաղաքային բնակիչների համեմատությամբ ավելի բարձր գնահատականներ են տվել հետևյալ երկու լուծումներին. բանտարկել մեղավոր ճանաչված անձանց և ավելացնել օժանդակությունը ընտանեկան բռնության տուժածների համար²²:

Հարցեր են նաև տրվել պարզելու համար, թե, հարցվածների կարծիքով, ընտանեկան բռնությունը պետք է լուծվի որպես անձնական հարց, թե որպես հասարակական խնդիր: Հարցվածների մեծամասնությունը (88 տոկոս) նկատել է, որ «չատ դեպքերում, ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանություն»: Հարցվածների մոտ 45 տոկոսը խիստ համաձայնել է այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակներ 4ը և 5): Գյուղական բնակիչները (93 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, որ ընտանեկան բռնությունը պետք է լուծվի որպես անձնական հարց, քան քաղաքային բնակիչները (85 տոկոս): Դեռ ավելին, դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածները (91 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան որևէ հաստատություն ավարտած հարցվածները (85 տոկոս)²³:

Այնուհանդերձ, հարցվածների 64 տոկոսն ասել է, որ «ընտանեկան բռնությունը հասարակական խնդիր է և պետք է լուծվի կառավարության և հասարակության կողմից», ընդ որում մոտ 20 տոկոսը խիստ համաձայն է այդ մտքին (տե՛ս Աղյուսակ 4թ): Քաղաքային բնակիչները (69 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, որ ընտանեկան բռնությունը պետք է լուծվի որպես հասարակական խնդիր, քան գյուղական բնակիչները (56 տոկոս): Նմանապես, դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (69 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (56 տոկոս)²⁴:

Այն հարցին, թե արդյոք պետք է լինի դրսի միջամտություն, եթե տղամարդը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, հարցվածների կեսից մի փոքր ավելին՝ մոտ 52 տոկոսը, բացասական է պատասխանել (տե՛ս Աղյուսակ 4ե): Դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածները (57 տոկոս) ավելի հակված են չհամաձայնելու, որ «եթե անուսինը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, ապա ընտանիքից դուրս մարդիկ պետք է միջամտեն», քան որևէ հաստատություն ավարտած հարցվածները (48 տոկոս)²⁵:

Սակայն, ընտանեկան բռնությանն իրենց անմիջական արձագանքի մասին հարցին պատասխանելիս՝ հարցվածների մոտ 38 տոկոսը նկատել է, որ «դա իմ գործը չէ, եթե անուսինը տանը վեճի ընթացքում ֆիզիկապես բռնանում է իր կնոջ հանդեպ» (տե՛ս Աղյուսակ 4գ): Գյուղական բնակիչները (47 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան քաղաքային բնակիչները (33 տոկոս), և այլ քաղաքների բնակիչները (40 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ կարծիքին, քան Երևանի բնակիչները (27 տոկոս): Դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածները (46 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան որևէ հաստատություն ավարտած հարցվածները (33 տոկոս)²⁶:

²² Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

²³ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

²⁴ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.000 մակարդակում:

²⁵ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.001 մակարդակում:

²⁶ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը բոլորի համար՝ 0.000 մակարդակում:

Հարցվածների գրեթե 72 տոկոսը հայտնել է, որ «Հայաստանն ընտանեկան բռնության մասին օրենքի կարիք ունի», մինչդեռ մոտ 10 տոկոսը չի կարողացել պատասխանել, թե արդյոք կա այդպիսի օրենքի անհրաժեշտությունը (տե՛ս Աղյուսակ 4ա): Երևանի բնակիչները (86 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, որ այդպիսի օրենք պետք է ընդունվի, քան այլ քաղաքների բնակիչները (77 տոկոս)²⁷:

Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարող գործակալությունների հանդեպ վստահությունը

Հարցվածների 35 տոկոսն է միայն համաձայնել, որ իրենք հավանաբար կդիմեին ոստիկանություն, եթե ենթարկվեին ընտանեկան բռնության (տե՛ս Աղյուսակ 4ժ): Ընտանեկան բռնության դեպքում ոստիկանություն դիմողների շարքում աշխատանք ունեցող հարցվածների տեսակարար կշիռն ավելի մեծ է (40 տոկոս), քան աշխատանք չունեցողներինը (33 տոկոս)²⁸:

Հարցվածների 91 տոկոսը նկատել է, որ «կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի՝ ընտանեկան բռնության դեմ պայքարելու համար»: Հարցվածների գրեթե կեսը խիստ համաձայնել է այդ ձևակերպմանը (տե՛ս Աղյուսակ 4դ):

Հարցվածներին նաև խնդրել են նշել, թե որքան են իրենք վստահում Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարող մի քանի գործակալություններին: Բավական մեծ թվով հարցվածներ չեն կարողացել պատասխանել այդ բոլոր գործակալությունների վստահելիության մասին հարցերին: Հարցվածների 34 տոկոսը չի կարողացել նշել, թե որքանով են վստահելի կանանց ՀԿ-ները՝ Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարում, 29 տոկոսը դժվարանում էր պատասխանել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, մոտ 14 տոկոսը՝ դատարանների և 13 տոկոսը՝ ոստիկանության արդյունավետության մասին:

Եթե չընդգրկենք այդ «չգիտեմ» պատասխանները, ապա կտեսնենք, որ հարցվածների մոտ 65 տոկոսը նշել է, որ կանանց ՀԿ-ները վստահելի են Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարում: 59 տոկոսն ասել է, որ դատարաններն են վստահելի: Հարցվածների գրեթե 39 տոկոսը վստահում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, մինչդեռ միայն մոտ 38 տոկոսն է վստահում ոստիկանությանը՝ Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարելիս (տե՛ս Աղյուսակներ 6ա-6դ և Աղյուսակ 7):

Հարցվածների մոտ 60 տոկոսը համաձայնել է, որ «դատական համակարգը շատ քիչ բան է անում հետապնդվող կնոջը պաշտպանելու համար», ընդ որում 24 տոկոսը խիստ համաձայն է (տե՛ս Աղյուսակ 4բ): Սակայն, պետք է նշել, որ բավական մեծ թիվ կազմող հարցվածներ (23 տոկոս) չեն կարողացել պատասխանել դատական համակարգի աշխատանքի մասին: Քաղաքային բնակիչները (80 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան գյուղական բնակիչները (71 տոկոս), և դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (78 տոկոս) փոքր-ինչ ավելի

²⁷ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.003 մակարդակում:

²⁸ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.003 մակարդակում:

հակված են համաձայնելու, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (75 տոկոս)²⁹:

Հայաստանում ընտանեկան բռնության և ճնշման միջադեպերը

Երբ հարց է տրվել կոնկրետ Հայաստանում ընտանեկան բռնության խնդրի մասին, հարցվածների մոտ 61 տոկոսը համաձայնել է, որ «ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում», մինչդեռ 13 տոկոսը չի կարողացել պատասխանել այդ հարցին (տե՛ս Աղյուսակ 4q):

Նպատակ ունենալով պարզելու, թե որքանով է տարածված ընտանեկան բռնության խնդիրը Հայաստանում՝ հարցվածներին խնդրել են պատասխանել, թե արդյոք իրենք ճանաչում են ընտանեկան բռնության ենթարկված կանանց, և եթե այո, ապա քանի կանանց են իրենք ճանաչում, և ինչ հարաբերություններ իրենք ունեն նրանց հետ:

Հարցվածների 48 տոկոսը ճանաչում է այնպիսի կանանց, որոնք ենթարկվել են ընտանեկան բռնության, կամ կասկածում է, որ ենթարկվել են (տե՛ս Աղյուսակ 57): Հարցվածները ճանաչում են, միջին հաշվով, ընտանեկան բռնության ենթարկված մոտ չորս կանանց (տե՛ս Աղյուսակ 58):

Հարցվածների մոտ 61 տոկոսը հայտնել է, որ այդ կանայք իրենց ծանոթներն են, գրեթե 26 տոկոսը նշել է, որ իրենց ընկերներն են, համարյա 25 տոկոսը գիտի, որ իրենց բարեկամները ենթարկվել են ընտանեկան բռնության, և 23 տոկոսը տեղյակ է, որ իրենց հարևաններն ընտանեկան բռնության զոհեր են (տե՛ս Աղյուսակ 59):

Հայաստանում ընտանեկան բռնության չափը պարզելու նպատակով դեմ առ դեմ հարցազրույցների ժամանակ հարցվածներին տրվել են քարտեր՝ դրանք ինքնուրույն լրացնելու համար: Այդ ինքնուրույն լրացման քարտերը ներառում էին չափորոշիչներ, որոնց նպատակն էր պարզել, թե արդյոք հարցվածները ենթարկվել էին ընտանեկան բռնության որևէ տեսակի, ներառյալ հոգեբանական, ֆիզիկական և սեռական ճնշումների: Այդ քարտերը պարունակում էին կանանց նկատմամբ բռնության և ճնշումների յուրաքանչյուր տեսակին բնորոշ հատուկ գործողություններ, և այդ հատուկ գործողություններից յուրաքանչյուրի դեպքում հարցվածներին խնդրել են նշել, թե արդյոք իրենք երբևէ ենթարկվել էին այդպիսի բռնության և ճնշումների՝ «հաճախ», «երբեմն», «հազվադեպ», թե «երբեք»:

Բռնության միջադեպերը բացահայտելու մասին նշում

Կարևոր է նշել, որ ավելի ընդհանուր չափորոշիչներ օգտագործելիս՝ ստացվել են այլ թվեր կանանց նկատմամբ բռնության և ճնշումների աստիճանի առումով: Այսպես, օրինակ, երբ հարց է տրվել այն մասին, թե որքան հաճախ է որևէ մեկը ուժ գործադրել հարցվածների նկատմամբ վերջին 12 ամիսների ընթացքում, մեծամասնությունը (93 տոկոս) նշել է, որ իրենց նկատմամբ երբեք ուժ չի գործադրվել (տե՛ս Աղյուսակներ 53 և 54): Հարցվածներին նաև հարց է տրվել այն մասին, թե որքան հաճախ են իրենց վնասել՝ նույնիսկ թեթևակի, ինչ-որ պատճառով վերջին 12 ամիսների ընթացքում: Վնասվածքները սահմանված էին, որպես «տարբեր տեսակի կապտուկներ, քերծվածքներ, կտրած վերքեր»: Հարցվածների ճնշող մեծամասնությունը՝ մոտ 98 տոկոսը, հայտնել է, որ իրենց երբեք չեն վնասել (տե՛ս Աղյուսակներ 55 և 56): Դեռ ավելին, հարցվածների 89 տոկոսը նշել է, որ, ընդհանուր

²⁹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

առմամբ, իրենք առնվազն «որոշ չափով վախեցած չեն» իրենց ներկա ամուսիններից կամ զուգընկերներից, ընդ որում 85 տոկոսը մատնանշել է, որ բոլորովին վախեցած չէ (տե՛ս Աղյուսակ 52):

Այդ ընդհանուր հարցերը չեն բացահայտում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշումների միջադեպերը, քանի որ Հայաստանի կանայք ոչ միշտ են հասկանում, թե ինչ է իրենից ներկայացնում այդպիսի բռնությունը, և սխալ կարծում են, որ հարցաթերթիկի ինքնուրույն լրացման բաժնի մեջ նշված բռնի և դաժան գործողություններից շատերը չեն համարվում բռնություն կանանց նկատմամբ: Հատուկ հարցեր տալով միայն կարելի է ստանալ Հայաստանում ընտանեկան բռնության ավելի հստակ պատկերը:

Հոգեբանական ճնշման միջադեպերը

Ինքնուրույն լրացման քարտերի միջոցով հարցվածներին խնդրել են պատասխանել, թե որքան հաճախ են իրենք ենթարկվել հոգեբանական ճնշման յուրաքանչյուր գործողության, և եթե ենթարկվել են, ապա ում կողմից և երբ:

Հոգեբանական ճնշումը սահմանված էր որպես.

- հարցվածին սպառնալը
- հարցվածի վրա գոռալը, ճչալը կամ հարցվածին հայհոյելը
- հարցվածի տեղափոխությունները վերահսկելը
- հարցվածին հեռախոսից օգտվել արգելելը
- հարցվածին իր ընտանիքի անդամներին կամ ընկերներին տեսնել արգելելը
- հարցվածի հասարակական կյանքը տնից դուրս սահմանափակելը
- հարցվածին փողից զրկելը (*նաև տնտեսական ճնշման տեսակ*)
- հարցվածին ուրիշների մոտ քննադատելը
- հարցվածին ուրիշների մոտ նվաստացնելը
- հարցվածի երեխաների վրա գոռալը կամ նրանց սպառնալը (այնպես, որ իրենց կարող են ցավ պատճառել):

Հարցվածների մոտ 66 տոկոսը ենթարկվել է ցանկում նշված հոգեբանական ճնշման առնվազն մեկ գործողության (տե՛ս Աղյուսակ 17): Չընդգրկելով «հազվադեպ» պատասխանները՝ կտեսնենք, որ հարցվածների 46 տոկոսը հայնտնել է, որ ենթարկվել է էնդոցինալ ճնշման՝ հաճախ կամ երբեմն:

Հարցվածների 26 տոկոսը նշել է, որ իրենց վրա գոռացել, ճչացել կամ իրենց հայհոյել են հաճախ կամ երբեմն, մինչդեռ 23 տոկոսը հայտնել է, որ իրենց հետ այդպիսի գործողությունները պատահել են հազվադեպ: Ավելի շատ քաղաքային (52 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (45 տոկոս) հայտնել, որ իրենց վրա գոռացել, ճչացել կամ իրենց հայհոյել են³⁰:


Հարցվածների 22 տոկոսը նշել է, որ իրենց տեղափոխությունները վերահսկել են հաճախ կամ երբեմն, մինչդեռ 11 տոկոսն ասել է՝ հազվադեպ: Հարցվածների մոտ 16 տոկոսը հայտնել է, որ իրենց հաճախ կամ երբեմն քննադատել են ուրիշների մոտ, մինչդեռ 13 տոկոսն ասել է՝ հազվադեպ: Գրեթե 14 տոկոսն ասել է, որ իրենց հասարակական կյանքը տնից դուրս սահմանափակված էր հաճախ կամ երբեմն, և ինը տոկոսը հայտնել է, որ իրենց

³⁰ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

հասարակական կյանքը սահմանափակված էր հազվադեպ: Հարցվածների 11 տոկոսը նկատել է, որ իրենց սպառնացել են հաճախ կամ երբեմն, մինչդեռ ինը տոկոսն ասել է՝ հազվադեպ:

Գծապատկեր Դ-ն ներկայացնում է հոգեբանական ճնշման հաճախ և երբեմն տեղի ունեցող գործողությունների գումարային տոկոսները:

Գծապատկեր Դ. Հոգեբանական ճնշման գործողությունների տոկոսները՝ հաճախ և երբեմն պատասխանները համախմբված



Հոգեբանական ճնշումների ենթարկված 660 հարցվածների 74 տոկոսը նկատել է, որ իրենց ամուսիններն են ճնշում գործադրել իրենց նկատմամբ, մոտ 28 տոկոսը նշել է, որ բռնարարներն իրենց սկեսուրներն են, մինչդեռ 10 տոկոսը հայտնել է, որ բռնարարներն իրենց սկեսրայրներն են (տե՛ս Աղյուսակ 18): Այդ հիմնական բռնարարների առումով վիճակագրական տեսանկյունից որևէ նշանակալի տարբերություն չի բացահայտվել քաղաքային և գյուղական բնակիչների միջև:

Հոգեբանական ճնշման միջադեպերի 35 տոկոսը տեղի է ունեցել վերջին տարվա ընթացքում: Վերջին տարվա ընթացքում հոգեբանական ճնշումների ենթարկված հարցվածների 16 տոկոսը հղի էր: Հարցվածների մոտ 44 տոկոսը հայտնել է, որ այդպիսի միջադեպերը տեղի են ունեցել հինգ տարուց ավելի, և մոտ 25 տոկոսն ասել է՝ երկու-հինգ տարի առաջ (տե՛ս Աղյուսակ 19):

Գրեթե բոլոր հարցվածները (95 տոկոս) կարծում են, որ «հոգեբանական բռնությունը նույնքան վատ է, որքան ֆիզիկականը», ընդ որում մոտ 61 տոկոսը խիստ համաձայն է (տե՛ս Աղյուսակ 13գ): Դեռ ավելին, հարցվածների 79 տոկոսը նկատել է, որ «ամուսնու կողմից քննադատումը ընտանիքից դուրս ընտանեկան բռնության տեսակ է» (տե՛ս Աղյուսակ 13դ): Դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (82 տոկոս) փոքր-ինչ ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (75 տոկոս)³¹:

Ֆիզիկական ճնշման միջադեպերը

Հարցվածներին տրվել են ֆիզիկական ճնշման տարբեր գործողություններ պարունակող երկու ցանկ և խնդրել են ինքնուրույն նշել, թե որքան հաճախ են իրենք ենթարկվել ֆիզիկական ճնշման յուրաքանչյուր գործողության, և եթե ենթարկվել են, ապա ում կողմից և երբ: Առաջին ցանկը պարունակում էր ոչ ծանր ֆիզիկական ճնշման օրինակներ, մինչդեռ երկրորդը ներկայացնում էր ծանր ֆիզիկական ճնշման դեպքեր (հարցվածներին տրված ցանկերը, թեև, չունեին այդպիսի անվանումներ):

Ոչ ծանր ֆիզիկական ճնշում

Ոչ ծանր ֆիզիկական ճնշումը սահմանված էր որպես.

- հարցվածին շարժվել կամ սենյակից դուրս գալ արգելելը
- հարցվածին խեղդել կամ ձեռքով նրա բերանը փակել փորձելը
- հարցվածի դեմքին բռունցքով կամ ոտքով հարվածելը
- հարցվածին որևէ բան իր կամքին հակառակ ֆիզիկապես ստիպել անելը
- հարցվածի մարմնին, ձեռքերին կամ ոտքերին ապտակելը
- հարցվածին ուժեղ հրելը, բռնելը կամ բռնելը
- հարցվածի մարմնին, ձեռքերին կամ ոտքերին բռունցքով կամ ոտքով հարվածելը
- որևէ իրով հարցվածին վնասել փորձելը
- հարցվածի վրա կամ սենյակի մեջ իրեր շարժելը
- պատերին կամ կահույքին բռունցքով կամ ոտքով հարվածելը
- հարցվածի իրերը ջարդելը
- հարցվածից սեռական հարաբերություններ այն ժամանակ պահանջելը, երբ նա չէր ցանկանում (*նաև սեռական ճնշման տեսակ*):

Հարցվածների 27 տոկոսը ենթարկվել է ցանկում նշված ոչ ծանր ֆիզիկական ճնշման առնվազն մեկ գործողության (տե՛ս Աղյուսակ 20): Զընդգրկելով «հազվադեպ» պատասխանները՝ կտեսնենք, որ հարցվածների 16 տոկոսը հայնտնել է, որ ենթարկվել է ոչ ծանր ֆիզիկական ճնշման՝ հաճախ կամ երբեմն:

Հարցվածների յոթ տոկոսին ուժեղ հրել, բռնել կամ բռնել են հաճախ կամ երբեմն, և յոթ տոկոսի մարմնին, ձեռքերին կամ ոտքերին ապտակել են հաճախ կամ երբեմն: Հարցվածների վեց տոկոսին հրել, բռնել կամ բռնել են հազվադեպ, և մոտ վեց տոկոսի մարմնին, ձեռքերին կամ ոտքերին ապտակել են հազվադեպ: Հարցվածների մոտ յոթ տոկոսը հայտնել է, որ իրեր են շարժել իրենց վրա կամ սենյակի մեջ հաճախ կամ երբեմն, մինչդեռ հինգ տոկոսն ասել է՝ հազվադեպ: Վեց տոկոսը նշել է, որ բռունցքով կամ ոտքով հարվածել


³¹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.022 նակարդակում:

Են պատերից կամ կահույքից հաճախ կամ երբեմն, մինչդեռ ևս վեց տոկոսն ասել է՝ հազվադեպ: Հարցվածների վեց տոկոսից սեռական հարաբերություններ են պահանջել այն ժամանակ, երբ իրենք չէին ցանկանում, հաճախ կամ երբեմն, և մոտ յոթ տոկոսից՝ հազվադեպ:

Հարցվածների վեց տոկոսին ֆիզիկապես ստիպել են անել որևէ բան իրենց կամքին հակառակ հաճախ կամ երբեմն, միջդեռ հինգ տոկոսին՝ հազվադեպ: Հարցվածների մոտ վեց տոկոսի իրերը ջարդել են հաճախ կամ երբեմն, մինչդեռ երեք տոկոսի իրերը ջարդել են հազվադեպ: Հարցվածների չորս տոկոսը հայտնել է, որ բռունցքով կամ ոտքով հարվածել են իրենց մարմնին, ձեռքերին կամ ոտքերին հաճախ կամ երբեմն, մինչդեռ երկու տոկոսն ասել է՝ հազվադեպ:

Գծապատկեր Ե-ն ներկայացնում է ոչ ծանր ֆիզիկական ճնշման հաճախ և երբեմն տեղի ունեցող գործողությունների գումարային տոկոսները:

Գծապատկեր Ե. Ոչ ծանր ֆիզիկական ճնշման գործողությունների տոկոսները՝ հաճախ և երբեմն պատասխանները համախմբված



Ոչ ծանր ֆիզիկական ճնշումների ենթարկված 275 հարցվածների մոտ 83 տոկոսը նկատել է, որ բռնարարներն իրենց ամուսիններն են, մոտ 19 տոկոսն ասել է, որ իրենց սկեսուրներն են ճնշում գործադրել, և գրեթե յոթ տոկոսը նշել է, որ բռնարարներն իրենց սկեսրայրներն են (տե՛ս Աղյուսակ 21): Այդ հիմնական բռնարարների առումով

վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն գտնվել քաղաքային և գյուղական բնակիչների միջև:

Ոչ ծանր ֆիզիկական ճնշման միջադեպերի 37 տոկոսը տեղի է ունեցել վերջին տարվա ընթացքում, ընդ որում հարցվածների 15 տոկոսը այդ ժամանակ հղի էր: Հարցվածների 38 տոկոսը հայտնել է, որ այդպիսի միջադեպերը տեղի են ունեցել հինգ տարուց ավելի, և մոտ 30 տոկոսն ասել է՝ երկու-հինգ տարի առաջ (տե՛ս Աղյուսակ 22): Ավելի շատ քաղաքային (43 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (31 տոկոս) հայտնել, որ իրենք ենթարկվել են ոչ ծանր ֆիզիկական ճնշման հինգ տարուց ավելի³²:

Ծանր ֆիզիկական ճնշում

Ծանր ֆիզիկական ճնշումը սահմանված էր որպես.

- հարցվածի երեխաներին հարվածելը կամ վնասելը
- հարցվածին սեռական հարաբերությունների մեջ մտնել ստիպելը (*նաև սեռական ճնշման տեսակ*)
- հարցվածին խեղդել, վառել կամ ջրահեղձ անել փորձելը
- հարցվածին իրով կամ զենքով, ինչպես օրինակ հրացանով, դանակով կամ մուրճով, սպառնալը
- հարցվածին սպանել սպառնալը
- հարցվածի ձեռքերը ոլորելը, մազերը՝ քաշելը
- հարցվածի դեմ զենք օգտագործելը:


Հարցվածների մոտ 12 տոկոսը ենթարկվել է ցանկուն նշված ծանր ֆիզիկական ճնշման առնվազն մեկ գործողության (տե՛ս Աղյուսակ 23): Չընդգրկելով «հազվադեպ» պատասխանները՝ կտեսնենք, որ հարցվածների վեց տոկոսը հայտնել է, որ ենթարկվել է ծանր ֆիզիկական ճնշման՝ հաճախ կամ երբեմն:

Հարցվածների երեք տոկոսը հայտնել է, որ իրենց ձեռքերը ոլորել են, մազերը քաշել են հաճախ կամ երբեմն, միջդեռ երկու տոկոսն ասել է՝ հազվադեպ: Եվս երեք տոկոսը նշել է, որ իրենց հաճախ կամ երբեմն ստիպել են սեռական հարաբերությունների մեջ մտնել, միջդեռ երկու տոկոսը նշել է՝ հազվադեպ: Հարցվածների մոտ երեք տոկոսը նկատել է, որ իրենց երեխաներին հարվածել կամ վնասել են հաճախ կամ երբեմն, միջդեռ ևս երեք տոկոսն ասել է՝ հազվադեպ:

Գծապատկեր Զ-ն ներկայացնում է ծանր ֆիզիկական ճնշման հաճախ և երբեմն տեղի ունեցող գործողությունների գումարային տոկոսները:

³² Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

Գծապատկեր 2. Ծանր ֆիզիկական ճնշման գործողությունների տոկոսները՝ հաճախ և երբեմն պատասխանները համախմբված



Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն նկատվել ծանր ֆիզիկական ճնշման այդ գործողությունների առումով քաղաքային և գյուղական բնակիչների միջև:

Ծանր ֆիզիկական ճնշումների ենթարկված 119 հարցվածների մոտ 85 տոկոսը նկատել է, որ իրենց ամուսիններն են ուժ գործադրել իրենց նկատմամբ, մոտ 13 տոկոսն ասել է, որ բռնարարներն իրենց սկեսուրներն են, և ութ տոկոսը հայտնել է, որ իրենց զուգընկերներն են ֆիզիկապես բռնացել իրենց հանդեպ (տե՛ս Աղյուսակ 24): Այդ հիմնական բռնարարների առումով վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել քաղաքային և գյուղական բնակիչների միջև:

Այդ 119 հարցվածների 36 տոկոսը հայտնել է, որ ծանր ֆիզիկական ճնշման միջադեպերը տեղի են ունեցել վերջին տարվա ընթացքում, ընդ որում հարցվածների 14 տոկոսը այդ ժամանակ հղի էր: Հարցվածների մոտ 40 տոկոսը հայտնել է, որ այդպիսի միջադեպերը տեղի են ունեցել հինգ տարուց ավելի, և մոտ 27 տոկոսն ասել է՝ երկու-հինգ տարի առաջ (տե՛ս Աղյուսակ 25): Ավելի շատ քաղաքային (49 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (28 տոկոս) հայտնել, որ իրենք ենթարկվել են ծանր ֆիզիկական ճնշման հինգ տարուց ավելի³³:

Հայաստանում ընտանեկան ֆիզիկական բռնության չափը

Եթե հարցվածները նշել են «երբեք» պատասխանից բացի այլ տարբերակներ ֆիզիկական ճնշման գործողություններ պարունակող ինքնուրույն լրացման քարտերում, այսինքն, եթե հարցվածները հայտնել են, որ իրենց հանդեպ իրականացվել է որևէ

³³ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05:

գործողություն, որը կարելի է սահմանել որպես ֆիզիկական ճնշում, ապա իրենց տրվել են մի քանի լրացուցիչ հարցեր՝ ընտանեկան բռնության այդպիսի միջադեպերի մանրամասները բացահայտելու համար, հատկապես վերջին միջադեպերի մանրամասները: Ընդհանուր առմամբ, նույնիսկ տեղեկությունների ակնհայտ քողարկման դեպքում 281 հարցվածներ հայտնել են, որ իրենք ընտանեկան ֆիզիկական ճնշման զոհեր են, այսինքն, քոլոր 1,006 հարցվածների մոտ 28 տոկոսը տանը ենթարկվել է ֆիզիկական ճնշման՝ ոչ ծանր կամ ծանր դրսևորումներով: Չընդգրկելով «հազվադեպ» պատասխանները՝ կտեսնենք, որ բացահայտվել է ընտանեկան ֆիզիկական ճնշման 167 միջադեպ, այսինքն, հարցվածների մոտ 17 տոկոսը հայտնել է, որ ենթարկվել է ֆիզիկական ճնշման՝ հաճախ կամ երբեմն:

Ավելին, այդ 281 հարցվածների մոտ 97 տոկոսը նկատել է, որ ենթարկվել է նաև հոգեբանական ճնշման առնվազն մեկ գործողության:

Ձեկույցի այս բաժինը ներկայացնում է ընտանեկան բռնության այդ 281 միջադեպերի մանրամասները՝ հիմնականում անդրադառնալով ֆիզիկական բռնության ամենավերջին միջադեպերին:

Ո՞վ է ուժ գործադրել հարցվածի նկատմամբ

Ընտանեկան ֆիզիկական ճնշումների ենթարկված 281 հարցվածների մոտ 85 տոկոսը հայտնել է, որ այն անձը, որը ուժ է գործադրել իրենց նկատմամբ, իրենց ամուսինն է: Հարցվածների 10 տոկոսն ասել է, որ իրենց սկեսուրն է (տե՛ս Աղյուսակ 26): Ավելի շատ աշխատանք չունեցող հարցվածներ (14 տոկոս), քան աշխատանք ունեցող հարցվածներ են (հինգ տոկոս) հայտնել, որ բռնարարն իրենց սկեսուրն է³⁴: Այդ բռնարարների առումով վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն բացահայտվել քաղաքային և գյուղական բնակիչների միջև:

Ամուսինը, միջին հաշվով, 36 տարեկան էր այն ժամանակ, երբ բռնացել էր իր կնոջ հանդեպ, մինչդեռ սկեսուրը մոտ 60 տարեկան էր, երբ ուժ էր գործադրել իր հարսի նկատմամբ (տե՛ս Աղյուսակ 27):

Տուժածի տարիքը ընտանեկան ճնշման ամենավերջին միջադեպի ժամանակ տատանվում էր 14-ից մինչև 66 տարեկան՝ միջին հաշվով լինելով 32 տարեկան (տե՛ս Աղյուսակ 28):

Ինչպե՞ս էր հարցվածն ընկալում ամենավերջին միջադեպը

Հարցվածների 58 տոկոսը կարծում է, որ այն ֆիզիկական ճնշումը, որը տեղի է ունեցել ամենավերջին միջադեպի ժամանակ, «պարզապես մի բան է, որ պատահում է», մոտ 31 տոկոսը համարում է այն սխալ, բայց ոչ հանցանք, և միայն մոտ 10 տոկոսն է այն անվանում հանցանք (տե՛ս Աղյուսակ 29): Ավելի շատ Երևանի բնակիչներ (19 տոկոս), քան այլ քաղաքների բնակիչներ են (չորս տոկոս) կարծում, որ այն, ինչ տեղի է ունեցել այդ վերջին միջադեպի ժամանակ, հանցանք էր: Ավելի շատ աշխատանք ունեցող հարցվածներ (15 տոկոս), քան աշխատանք չունեցող հարցվածներ են (յոթ տոկոս) բնութագրում այն, ինչ տեղի է ունեցել վերջին միջադեպի ժամանակ, որպես հանցանք³⁵:

³⁴ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

³⁵ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

Հարցվածների մոտ 35 տոկոսն է միայն կարծում, որ ֆիզիկական ճնշումը, որը տեղի է ունեցել ամենավերջին միջադեպի ժամանակ, իրենց դարձնում է ընտանեկան բռնության զոհ (տե՛ս Աղյուսակ 30): Ավելի շատ Երևանի բնակիչներ (42 տոկոս), քան այլ քաղաքների բնակիչներ են (26 տոկոս) իրենց համարում են զոհեր այդ վերջին միջադեպի պատճառով³⁶:

Հարցվածների կեսը կարծում է, որ իրենք բոլորովին մեղավոր չեն այդ ամենավերջին միջադեպի ժամանակ պատահածի համար: Հարցվածների մոտ 40 տոկոսը գտնում է, որ իրենք մասամբ մեղավոր են, մինչդեռ վեց տոկոսը համարում է, որ իրենք ամբողջությամբ մեղավոր են այդ միջադեպի համար (տե՛ս Աղյուսակ 32): Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել քաղաքային և գյուղական բնակիչների, ինչպես նաև Երևանի և այլ քաղաքների բնակիչների միջև:

Հարցվածներին նաև խնդրել են նշել, թե արյոք իրենք փորձել եք դադարեցնել ֆիզիկական բռնության այդ ամենավերջին միջադեպը: 42 տոկոսը շատ է փորձել դադարեցնել այն, մոտ 34 տոկոսը որոշ չափով է փորձել, և գրեթե 24 տոկոսը նույնիսկ չի էլ փորձել (տե՛ս Աղյուսակ 33): Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն նկատվել քաղաքային և գյուղական բնակիչների, ինչպես նաև Երևանի և այլ քաղաքների բնակիչների միջև:

Ինչպե՞ս է ամենավերջին միջադեպն ազդել հարցվածի վրա

Այն հարցվածներին, ովքեր ենթարկվել են ֆիզիկական ճնշումների, տրվել է հարց (որտեղ թույլատրելի էին մեկից ավելի պատասխաններ) այն մասին, թե ինչպես է ընտանեկան բռնության այդ փորձը ազդել իրենց վրա:

Հարցվածների մեծամասնությունը՝ մոտ 80 տոկոսը, զայրացած էր: Հարցվածների 48 տոկոսը հայտնել է, որ իրենց ինքնագնահատականն իջել էր: 47 տոկոսը դեպրեսիայի մեջ էր այդ միջադեպի պատճառով, և մոտ 46 տոկոսն ուներ ամոթի զգացում: Այդ միջադեպի արդյունքում 42 տոկոսն ուներ վախի զգացում, և 40 տոկոսն ուներ քնի հետ կապված խնդիրներ: Ավելին, հարցվածների մոտ 33 տոկոսը վախեցած էր իրենց երեխաների համար (տե՛ս Աղյուսակ 31 և Աղյուսակ 31ա, որը ներկայացնում է «այլ» պատասխանների ցանկը):

Շատ ավելի քաղաքային (85 տոկոս), քան գյուղական բնակիչներն էին (70 տոկոս) զայրացած այդ վերջին միջադեպի պատճառով, մինչդեռ ավելի շատ գյուղական (61 տոկոս), քան քաղաքային բնակիչները (37 տոկոս) ունեին ամոթի զգացում, և ավելի շատ գյուղական (57 տոկոս), քան քաղաքային բնակիչներն էին (43 տոկոս) դեպրեսիայի մեջ: Շատ ավելի Երևանի բնակիչներ (93 տոկոս), քան այլ քաղաքների բնակիչներն էին (77 տոկոս) զայրացած պատահածի պատճառով³⁷:

Բռնության ենթարկված հարցվածների 41 տոկոսը նշել է, որ իրենց երեխաները բռնության միջադեպերի ականատես են եղել (տե՛ս Աղյուսակ 36): Ավելի շատ քաղաքային (42 տոկոս), քան գյուղական բնակիչներ են (40 տոկոս) հայտնել, որ իրենց երեխաները տեսել են ընտանեկան բռնության միջադեպերը³⁸:

Այդ 281 հարցվածների գրեթե 30 տոկոսը նկատել է, որ բռնարարներն ակոհողի կամ թմրադեղերի ազդեցության տակ են, երբ բռնանում են իրենց հանդեպ (տե՛ս Աղյուսակ 35):

³⁶ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

³⁷ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

³⁸ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05 :

Հաղթահարել և պատասխան տալ ընտանեկան բռնությանը

Այդ 281 հարցվածների 60 տոկոսը նշել է, որ իրենք կարող են ինչ-որ բան անել՝ իրենց հանդեպ բռնությունը դադարեցնելու համար (տե՛ս Աղյուսակ 34):


Բռնությանը վերջ տալու համար օգնության դիմելը

Ֆիզիկական բռնության ենթարկված հարցվածների մոտ 29 տոկոսն է միայն երբևէ դիմել ինչ-որ մեկի օգնությանը՝ բռնությանը վերջ տալու համար (տե՛ս Աղյուսակ 37): Հարցվածների 71 տոկոսը ոչ մեկին չի դիմել, և օգնության համար չդիմելու ամենահաճախ նշված պատճառն այն է, որ հարցվածները չեն համարել այն լուրջ խնդիր (41 տոկոս):

Հարցվածները նշել են նաև այլ պատճառներ, որոնք բացատրում են, թե ինչու իրենք չեն դիմել օգնության համար՝ հարցվածներն ինքնուրույն են լուծել խնդիրը (16 տոկոս), այդպիսի խնդիրները պետք է լուծվեն ընտանիքի ներսում (15 տոկոս), չկար որևէ մեկը, ում հարցվածները կարող էին դիմել օգնության համար (ինը տոկոս), ամուսինը խոստացել էր փոխվել (վեց տոկոս), և դրսի օգնության դիմելն ամոթալի և անհարմար է (հինգ տոկոս): Աղյուսակներ 38 և 38ա ներկայացնում են ըստ խմբերի դասակարգված բոլոր պատասխանները, որոնք հարցվածները հայտնել են բաց հարցի ժամանակ:

Այն 81 հարցվածների համար, ովքեր ասել են, որ դիմել են օգնության համար, թվարկել են ոչ պաշտոնական և պաշտոնական կառույցների ցանկ և խնդրել են նշել, թե այդ ցանկից ում են իրենք դիմել: Մոտ 77 տոկոսը դիմել է իրենց ընտանիքների անդամներին, 27 տոկոսն օգնություն են խնդրել իրենց ընկերներից, և համարյա 24 տոկոսը դիմել է հարևաններին: Բացի այդ ոչ պաշտոնական խմբերից, որոշ հարցվածներ դիմել են պաշտոնյաներին (17 տոկոսը դիմել է ոստիկանություն, մինչդեռ միայն մոտ չորս տոկոսը՝ դատարաններ) կամ պաշտոնական ծառայություններ (10 տոկոսը՝ բուժաշխատողներին, և ևս 10 տոկոսը՝ իրավաբանական խորհրդատվության աշխատակիցներին) (տե՛ս Աղյուսակ 39 և Գծապատկեր Է): Մեկ հարցված է միայն զանգահարել թե՛ զծի հեռախոսահամարով: Հարցվածներից և ոչ մեկը չի դիմել ապաստարաններ, ճգնաժամային կենտրոններ կամ կանանց ՀԿ-ներ, որը ենթադրում է, որ իրենք կա՛մ իրազեկ չեն նմանատիպ ծառայությունների մասին, կա՛մ չեն վստահում այդ հաստատություններին:

Գծապատկեր Է. Օգնության համար ոչ պաշտոնական և պաշտոնական կառույցներին դիմողների տոկոսները



Բժշկական օգնության անհրաժեշտությունը

Ֆիզիկական բռնության ենթարկված հարցվածներին խնդրել են նաև նշել, թե արդյոք իրենք դիմել են բժշկի կամ հիվանդանոց ընտանեկան բռնության հետևանքով ստացված վնասվածքների պատճառով: Հարցվածների մոտ ինը տոկոսը դիմել է բժշկական օգնության համար (տե՛ս Աղյուսակ 40):

Բժշկի կամ հիվանդանոց դիմելու պատճառները նկարագրելիս՝ հարցվածների մոտ 71 տոկոսը բացատրել է, որ իրենք ունեին ֆիզիկական խնդիրներ, ինչպես օրինակ արյան ճնշման, սրտի հետ խնդիրներ, կտրած վերքեր և քերծվածքներ, ինչպես նաև կոտրվածքներ: 29 տոկոսը նշել է, որ իրենք դիմել են բժշկական օգնության համար նյարդային խանգարումների, հոգեկան դեպրեսիայի կամ սթրեսի պատճառով (տե՛ս Աղյուսակ 41):

Ոստիկանություն դիմելը

Երբ հարց է տրվել օգնության համար ոստիկանություն դիմելու մասին, բռնության ենթարկված հարցվածների մոտ վեց տոկոսն է միայն նշել, որ դիմել է ոստիկանություն ընտանեկան բռնության պատճառով (տե՛ս Աղյուսակ 42):

Այն հարցվածները, ովքեր չեն դիմել են ոստիկանություն օգնության համար, բաց հարցի ժամանակ նշել են չդիմելու տարբեր պատճառներ, որոնք դասակարգվել են ըստ խմբերի և որոնք ներկայացված են Աղյուսակ 43-ում: Հարցվածների մեծամասնությունը՝ մոտ 62 տոկոսը, չէր դիմել ոստիկանություն, քանի որ կարծում էր, որ այն աննշան խնդիր էր՝ ոչ լուրջ: 12 տոկոսը համոզված էր, որ այդպիսի խնդիրները պետք է լուծվեն որպես անձնական հարցեր՝ ընտանիքի ներսում: Մոտ ութ տոկոսը չէր հավատում, որ ոստիկանությունը կարող էր ինչ-որ բան անել՝ օգնելու համար: Համարյա հինգ տոկոսը պնդում էր, որ դրսի օգնության դիմելն անոթալի և անհարմար է: Չորս տոկոսը չէր ուզում, որ բռնարարներին ձերբակալեն կամ բանտարկեն:

Այն 16 հարցվածներին, ովքեր դիմել են ոստիկանություն օգնության համար, խնդրել են նշել, թե ինչ քայլեր է ձեռնարկել ոստիկանությունը: Պատասխանները խմբավորվել են և ներկայացված են Աղյուսակ 44-ում: Հարցվածների 75 տոկոսը նշել է, որ ոստիկանությունը ձերբակալել է բռնարարին, ստորագրել է տվել մի փաստաթուղթ, որ նա էլ երբեք ուժ չի գործադրի, և ազատ է արձակել նրան: 25 տոկոսը հայտնել է, որ ոստիկանությունը ոչինչ չի ձեռնարկել:

Այդ նույն 16 հարցվածներին նաև հարց է տրվել այն մասին, թե որքանով են իրենք բավարարված ոստիկանության կողմից հարցի լուծմամբ: Գրեթե 69 տոկոսը առնվազն «որոշ չափով բավարարված է» նրանով, թե ինչպես է ոստիկանությունն արձագանքել իրենց բողոքին (տե՛ս Աղյուսակ 45):

Օգնության համար ոստիկանություն դիմած հարցվածների կեսը նշել է, որ բռնարարի դաժան կամ սպառնացող վերաբերմունքը իրենց նկատմամբ նվազել է ոստիկանության միջամտությունից հետո: 31 տոկոսը հայտնել է, որ բռնության աստիճանը մնացել է նույնը ոստիկանության միջամտությունից հետո, մինչդեռ մոտ 19 տոկոսը նկատել է, որ այն սաստկացել է (տե՛ս Աղյուսակ 46):

Չեռանալ, թե մնալ բռնացող զուգընկերոջ հետ

Բռնության ենթարկված հարցվածներին նաև խնդրել են նշել, թե արդյոք իրենք երբևէ լքել են իրենց ամուսիններին կամ զուգընկերներին՝ նույնիսկ կարճ ժամանակով, այն պատճառով, որ նրանք բռնացել կամ սպառնացել են իրենց: Բռնության ենթարկված հարցվածների 32 տոկոսը հայտնել է, որ իրենք լքել են իրենց ամուսիններին կամ զուգընկերներին (տե՛ս Աղյուսակ 47): Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն հայտնաբերվել քաղաքային և գյուղական բնակիչների, ինչպես նաև երևանի և այլ քաղաքների բնակիչների միջև:

Այն 191 հարցվածների, ովքեր չեն լքել, մեծ մասը (58 տոկոսը) բացատրել է, որ կարիք չկար լքելու, քանի որ խնդիրը շատ փոքր և աննշան էր: Մոտ 12 տոկոսն ասել է, որ իրենք չեն լքել, քանի որ սիրում են իրենց ամուսիններին կամ զուգընկերներին, մինչդեռ մոտ 10 տոկոսը մնացել է հանուն ընտանիքի և երեխաների: Հինգ տոկոսն ասել է, որ տեղ չունեն գնալու (տե՛ս Աղյուսակներ 48 և 48ա, որոնք ներկայացնում են ըստ խմբերի դասակարգված բոլոր պատասխանները):

Տնից հեռացած 90 հարցվածների մոտ 87 տոկոսը մնացել է իրենց ծնողների տանը: Մոտ վեց տոկոսն ապրել է այլ բարեկամների տանը, ինչպես օրինակ քույրերի կամ եղբայրների: Ավելին, երեք տոկոսը հայտնել է, որ գնացել է ընկերների տուն, և երկու տոկոսը՝ հարևանների (տե՛ս Աղյուսակներ 49 և 49ա, որոնք ներկայացնում են բաց հարցի բոլոր պատասխանները):

Տնից հեռացած հարցվածների համարյա 88 տոկոսը վերջիվերջո վերադարձել է տուն (տե՛ս Աղյուսակ 50): Ավելի շատ դպրոցից հետո ոչ մի ուսումնական հաստատություն չավարտած հարցվածներ (97 տոկոս), քան որևէ հաստատություն ավարտած հարցվածներ են (83 տոկոս) վերադարձել տուն³⁹: Այդպիսի որոշման հիմնական պատճառը երեխաներն էին. այդ հարցվածների 57 տոկոսը նշել է, որ չէր ուզում թողնել երեխաներին առանց հայրերի: Վերադառնալու մյուս երեք պատճառներն են՝ սերն ամուսնու հանդեպ (11 տոկոս), ամուսնու խոստումը, որ կփոխվի (ութ տոկոս) և ամուսնու կողմից ճնշումը՝ կնոջը վերադարձնելու համար (տե՛ս Աղյուսակ 51, որը ներկայացնում է ըստ խմբերի դասակարգված բոլոր պատասխանները):

Միևնույն ժամանակ, երբ բոլոր 1,006 հարցվածներին տրվել են հարցեր՝ իրենց վերաբերմունքն իմանալու համար, 71 տոկոսը հայտնել է, որ «այն տուժածները, ովքեր չեն հեռանում բռնացողներից, մասամբ մեղավոր են բռնության համար» (տե՛ս Աղյուսակ 13ա): Երևանի բնակիչները (76 տոկոս) ավելի հակված են համաձայնելու այդ ձևակերպմանը, քան այլ քաղաքների բնակիչները (68 տոկոս): Նմանապես, դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (75 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան ոչ մի հաստատություն չավարտած հարցվածները (65 տոկոս)⁴⁰:

Դեռ ավելին, հարցվածների 85 տոկոսը համաձայնել է, որ «շատ կանայք պետք է ընտրություն կատարեն՝ ապրել առանձին և լինել աղքատ, թե մնալ այն տանը, որտեղ նրանց ծեծում են» (տե՛ս Աղյուսակ 13բ): Դպրոցից հետո որևէ ուսումնական հաստատություն ավարտած հարցվածները (87 տոկոս) ավելի հակված են համաձայնելու, քան ոչ մի

³⁹ Խի քառակուսին (Chi-square) ≤ 0.05:

⁴⁰ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը երկուսի համար՝ 0.05 մակարդակից ցածր:

հաստատություն չավարտած հարցվածները (81 տոկոս)⁴¹: Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ չեն նկատվել քաղաքային և գյուղական բնակիչների, ինչպես նաև երևանի և այլ քաղաքների բնակիչների միջև:

Ընտանեկան բռնության չափի գնահատումը

Հարցաթերթիկն օգտագործել է բազմաթիվ չափորոշիչներ՝ կանանց նկատմամբ բռնության ու ճնշման չափը գնահատելու համար: Ինչպես և ակնկալվում էր, այն քարտերը, որոնք հարցվածներն ինքնուրույն են լրացրել, բացահայտել են ավելի շատ միջադեպեր, քան դեմ առ դեմ հարցազրույցների բաժնում տրված հարցերը:

Հոգեբանական և ֆիզիկական բռնության միջադեպերը, որոնք հայտնաբերվել են ինքնուրույն լրացման քարտերի միջոցով, բացահայտել են լիովին այլ պատկեր, որտեղ գրեթե 30 տոկոսը հայտնել է, որ ֆիզիկական բռնության զոհ է: Խնդիրը, կարծես, կայանում է նրանում, որ Հայաստանի կանայք չեն կարողանում սահմանել ընտանեկան բռնությունն ու ճնշումը որպես ընդհանուր հասկացություններ:

Չնայած բազմաթիվ միջոցներ են օգտագործվել ընտանեկան բռնության և ճնշումների մասին տեղեկատվություն հավաքագրելու համար, հարցազրուցավարները հայտնել են, որ կային դեպքեր, երբ հարցվածները չէին հայտնում կամ քողարկում էին տեղեկությունները:

Վերջապես, պարզվել է, որ կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը հավասարապես են բաշխված Հայաստանում՝ տարիքի, եկամտի, զբաղվածության կարգավիճակի և կրթական մակարդակի հիման վրա ստեղծված խմբերի միջև: Այսպիսով, այս գործոնների հիման վրա վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություններ մեծ մասամբ չեն նկատվել բռնության և ճնշման դեպքերի առումով:

⁴¹ Վիճակագրական տեսանկյունից նշանակալի տարբերություն, օգտագործելով T-թեստը՝ նշանակալիությունը՝ 0.008 մակարդակում:

Հիմնական արդյունքների ամփոփում

Այս բաժնում ամփոփված են Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության և ճնշումների վերաբերյալ հանրապետության ամբողջ տարածքում իրականացված հարցման հիմնական արդյունքները՝ ներկայացված գեկույցում:

Ընտանեկան հարաբերությունների մասին պատկերացումները

- Հայաստանի տասը կանանցից վեցը կարծում են, որ «լավ կինը միշտ ենթարկվում է իր ամուսնուն՝ նույնիսկ համաձայն չլինելու դեպքում», և «ամուսնու համար կարևոր է ցույց տալ իր կնոջը, թե ով է ղեկավարում տանը»:
- Հայաստանի տասը կանանցից մոտ չորսն են միայն համաձայնել, որ կինը պետք է հնարավորություն ունենա ընտրել իր ընկերներին, նույնիսկ եթե ամուսինը նրանց չի հավանում:
- Հայաստանի տասը կանանցից միայն երկուսն են համաձայնել, որ «նորմալ է համարվում, երբ ամուսինն արգելում է իր կնոջն աշխատել», և Հայաստանի տասը կանանցից մոտ չորսը համաձայնել են, որ «կնոջ պարտականությունն է սեռական հարաբերություններ ունենալ ամուսնու հետ՝ նույնիսկ չցանկանալու դեպքում»:
- Հայաստանի կանանց մոտ երկու երրորդը կարծում է, որ ոչ հավատարիմ լինելն արդարացնում է ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ: Հայաստանի տասը կանանցից հինգը հայտնել են, որ իրենք արդարացնում են ֆիզիկական ուժի գործադրումը կանանց նկատմամբ երեխաներին անտեսելու դեպքում, տասից չորսը՝ ամուսնուն չենթարկվելու դեպքում, տասից երեքը՝ առանց ամուսնուն տեղյակ պահելու ինչ-որ տեղ գնալու դեպքում, և տասից ևս երեքը՝ ամուսնու հետ վիճելու դեպքում:
- Գրեթե բոլոր կանայք համաձայնել են, որ «ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը»:
- Հայաստանի տասը կանանցից երեքը չեն մասնակցում տնային տնտեսության համար խոշոր գնումների մասին որոշումների կայացմանը, և տասը կանանցից երկուսը չեն մասնակցում իրենց իսկ առողջության խնամքի կամ իրենց իսկ կողմից վաստակած գումարի ծախսելու շուրջ որոշումների կայացմանը:

Ընտանեկան բռնության շարժառիթների ըմբռնման մակարդակը

- Գրեթե բոլոր կանայք համաձայնել են, որ թմրադեղերի և ալկոհոլի խնդիրները ընտանեկան բռնության առաջնային պատճառներն են:
- Հայաստանի տասը կանանցից մոտ ինը կարծում են, որ ընտանեկան բռնությունը շարունակվում է, քանի որ կանայք չեն լքում իրենց բռնացող տղամարդկանց:
- Հայաստանի տասը կանանցից ինը կարծում են, որ աղքատությունը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը, մինչդեռ տասը կանանցից յոթը նշում են, որ հանկարծակի ֆինանսական խնդիրները կամ աշխատանքի կորուստը ընտանեկան բռնության պատճառներ են:

- Հայաստանի տասը կանանցից ինը կարծում են, որ ընտանեկան բռնությունը տղամարդկանց և կանանց միջև անհավասար հարաբերությունների արդյունք է:
- Հայաստանի տասը կանանցից մոտ ութը համաձայնել են, որ շատ տղամարդիկ սովորում են բռնություն կիրառել, քանի որ իրենք ականատես են եղել բռնության՝ մանկության ընթացքում իրենց տանը:

Ընտանեկան բռնության և հանրային գործակալությունների նկատմամբ վերաբերմունքը

- Հայաստանի տասը կանանցից ինը կարծում են, որ ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանություն:
- Հայաստանի տասը կանանցից վեցը կարծում են, որ այդ խնդիրը, որպես հասարակական հարց, պետք է լուծվի կառավարության և հասարակության կողմից:
- Հայաստանի կանանց միայն կեսն է համաձայնել, որ պետք է լինի դրսի միջամտություն, եթե տղամարդը կոպիտ է վերաբերվում իր կնոջը:
- Հայաստանի տասը կանանցից յոթը կարծում են, որ Հայաստանն ընտանեկան բռնության մասին օրենքի կարիք ունի, և տասը կանանցից ինը կարծում են, որ կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի՝ ընտանեկան բռնության դեմ պայքարելու համար:
- Հայաստանի տասը կանանցից մոտ չորսը միայն կդիմեին ոստիկանություն, եթե ենթարկվեին ընտանեկան բռնության:
- Հայաստանի տասը կանանցից վեցը համաձայնել են, որ դատական համակարգը շատ քիչ բան է անում հետապնդվող կնոջը պաշտպանելու համար:

Հոգեբանական ճնշում

- Հայաստանի կանանց գրեթե 66 տոկոսը ենթարկվել է հոգեբանական ճնշման, ընդ որում 46 տոկոսը՝ հաճախ կամ երբեմն:
- Հոգեբանական ճնշման միջադեպերի 74 տոկոսի ժամանակ բռնարարներն ամուսիններն էին, և 28 տոկոսի ժամանակ՝ սկեսուրները:
- Գրեթե բոլոր կանայք կարծում են, որ հոգեբանական բռնությունը նույնքան վատ է, որքան ֆիզիկականը, և տասը կանանցից ութը համաձայնել են, որ ամուսնու կողմից քննադատումը ընտանիքից դուրս ընտանեկան բռնության տեսակ է:

Ոչ ծանր ֆիզիկական ճնշում

- Հայաստանի կանանց 27 տոկոսը ենթարկվել է ոչ ծանր ֆիզիկական ճնշման, ընդ որում 16 տոկոսը՝ հաճախ կամ երբեմն:
- Հայաստանի տասը կանանցից մեկին կա՛մ ուժեղ հրել, բռնել կամ բռթել են, կա՛մ ապտակել են նրա մարմնին, ձեռքերին կամ ոտքերին, կա՛մ նրանից պահանջել են սեռական հարաբերություն ունենալ այն ժամանակ, երբ նա չէր ցանկանում, կա՛մ նրան ֆիզիկապես ստիպել են անել որևէ բան իր կամքին հակառակ:

- Ոչ ծանր ֆիզիկական ճնշման տասը միջադեպերից ութը տեղի են ունեցել ամուսինների պատճառով, մինչդեռ տասը բռնարարներից մոտ երկուսը սկեսուրներն էին:

Ծանր ֆիզիկական ճնշում

- Հայաստանի կանանց մոտ 12 տոկոսը ենթարկվել է ծանր ֆիզիկական ճնշման, ընդ որում վեց տոկոսը՝ հաճախ կամ երբեմն:
- Հայաստանի կանանց հինգ տոկոսի ձեռքերը ոլորել են, մազերը՝ քաշել, ևս հինգ տոկոսի երեխաներին հարվածել կամ վնասել են, և մեկ այլ հինգ տոկոսին ստիպել են սեռական հարաբերությունների մեջ մտնել:
- Ծանր ֆիզիկական ճնշման տասը միջադեպերից գրեթե ինը տեղի են ունեցել ամուսինների պատճառով, իսկ տասը միջադեպերից մեկի ժամանակ սկեսուրներն են ֆիզիկական ուժ գործադրել իրենց հարսերի նկատմամբ:

Հայաստանում ընտանեկան ֆիզիկական բռնության չափը

- Հայաստանի տասը կանանցից մոտ երեքը տանը ենթարկվել են ֆիզիկական ճնշման, ընդ որում տասը կանանցից երկուսը՝ հաճախ կամ երբեմն:
- Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը մեծ մասամբ հավասարապես են բաշխված Հայաստանում՝ տարիքի, եկամտի, զբաղվածության կարգավիճակի և կրթական մակարդակի հիման վրա ստեղծված խմբերի միջև:
- Բռնության ենթարկված տասը կանանցից գրեթե մեկը դիմել է բժշկական օգնության համար ընտանեկան բռնության հետևանքով ստացված վնասվածքների պատճառով: 71 տոկոսը ուներ ֆիզիկական խնդիրներ, մինչդեռ 29 տոկոսը՝ հոգեկան խանգարումներ:
- Ֆիզիկական բռնության ենթարկված կանանց կեսը կարծում է, որ իրենք բոլորովին մեղավոր չեն ամենավերջին միջադեպի ժամանակ պատահածի համար: Տասը կանանցից չորսը կարծում են, որ իրենք մասամբ մեղավոր են:
- Բռնության ենթարկված տասը կանանցից միայն չորսն են շատ փորձել դադարեցնել ամենավերջին միջադեպը, մինչդեռ տասից երեքը որոշ չափով են փորձել, և տասից երկուսը նույնիսկ չեն էլ փորձել:
- Բռնության ենթարկված տասը կանանցից ութը զայրացած էին, հինգն ունեին ցածր ինքնագնահատական, ևս հինգը դեպրեսիայի մեջ էին, և մեկ այլ հինգը ունեին ամոթի զգացում այդ միջադեպի պատճառով:
- Բռնության ենթարկված տասը կանանցից չորսը հայտնել են, որ երեխաները բռնության միջադեպերի ակամատես են եղել:

Հաղթահարել և պատասխան տալ ընտանեկան բռնությանը

- Բռնության ենթարկված երեք կանանցից միայն մեկն է դիմել ինչ-որ մեկի օգնությանը՝ բռնությանը վերջ տալու համար:

- Բռնության ենթարկված կանանց 21 տոկոսը դիմել է պաշտոնյաներին, իսկ 20 տոկոսը՝ աջակցության ծառայություններ:
- Ոչ մի կին չի հայտնել, որ դիմել է ապաստարաններ, ճգնաժամային կենտրոններ կամ կանանց ՀԿ-ներ:
- Բռնության ենթարկված կանանց միայն վեց տոկոսն է դիմել ոստիկանություն ընտանեկան բռնության պատճառով:
- Բռնության ենթարկված կանանց միայն մեկ երրորդն է լքել իրենց զուգընկերներին, քանի որ նրանք բռնացել կամ սպառնացել են իրենց:

Աղյուսակ 1. Հարցազրույցների քանակն ըստ մարզերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Երևան	350	34.8	34.3
Արագածոտն	43	4.3	4.3
Արարատ	85	8.4	8.5
Արմավիր	86	8.5	8.6
Գեղարքունիք	74	7.4	7.4
Լոռի	89	8.8	8.9
Կոտայք	84	8.3	8.5
Շիրակ	88	8.7	8.8
Սյունիկ	48	4.8	4.8
Տավուշ	42	4.2	4.2
Վայոց Ձոր	17	1.7	1.7
Ընդամենը	1006	100.0	100.0

Աղյուսակ 2. Հարցազրույցների քանակն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Քաղաքային	651	64.7	64.3
Գյուղական	355	35.3	35.7
Ընդամենը	1006	100.0	100.0

Աղյուսակ 3. Հարցազրույցների քանակն ըստ Երևանի և տասը մարզերի՝ ՀՀ մարդահամարի տվյալների հետ համեմատած			
	Քանակը	Տոկոսը	ՀՀ 2001 մարդահամարի տվյալները
Երևան	350	34.8	34.3
Մարզեր	656	65.2	65.7
Ընդամենը	1006	100.0	100.0

Աղյուսակ 4ա. Հայաստանն ընտանեկան բռնության մասին օրենքի կարիք ունի				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը**	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	321	31.9	35.4	35.4
Համաձայն եմ	400	39.8	44.2	79.6
Համաձայն չեմ	132	13.1	14.6	94.2
Բոլորովին համաձայն չեմ	53	5.3	5.8	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	100	9.9	100.0	
Ընդամենը	1006	100.0		
Մոդան=2, Միջինը=1.91, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)				
**Իրական տոկոսն առանց «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխանների է				

Աղյուսակ 4բ. Դատական համակարգը շատ քիչ բան է անում հետապնդվող կնոջը պաշտպանելու համար				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	237	23.6	30.4	30.4
Համաձայն եմ	363	36.1	46.5	76.9
Համաձայն չեմ	128	12.7	16.4	93.3
Բոլորովին համաձայն չեմ	52	5.2	6.7	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	226	22.5	100.0	
Ընդամենը	1006	100.0		
Մոդան=2, Միջինը=1.99, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)				

Աղյուսակ 4գ. Դա իմ գործը չէ, եթե անուսինը տանը վեճի ընթացքում ֆիզիկապես բռնանում է իր կնոջ հանդեպ				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	112	11.1	11.8	11.8
Համաձայն եմ	245	24.4	25.8	37.6
Համաձայն չեմ	352	35.0	37.1	74.7
Բոլորովին համաձայն չեմ	240	23.9	25.3	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	57	5.7	100.0	
Ընդամենը	1006	100.0		
Մոդան=3, Միջինը=2.76, Սեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)				

Աղյուսակ 4դ. Կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի՝ ընտանեկան բռնության դեմ պայքարելու համար

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	452	44.9	46.9	46.9
Համաձայն եմ	428	42.5	44.4	91.4
Համաձայն չեմ	54	5.4	5.6	97.0
Բոլորովին համաձայն չեմ	29	2.9	3.0	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	43	4.3	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=1, Սիջիմը=1.65, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 4ե. Եթե ամուսինը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, ապա ընտանիքից դուրս մարդիկ պետք է միջամտեն

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	171	17.0	17.9	17.9
Համաձայն եմ	291	28.9	30.5	48.5
Համաձայն չեմ	293	29.1	30.7	79.2
Բոլորովին համաձայն չեմ	198	19.7	20.8	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	53	5.3	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=3, Սիջիմը=2.54, Սեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 4զ. Ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	257	25.5	29.4	29.4
Համաձայն եմ	352	35.0	40.3	69.7
Համաձայն չեմ	195	19.4	22.3	92.0
Բոլորովին համաձայն չեմ	70	7.0	8.0	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	132	13.1	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=2, Սիջիմը=2.09, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 4է. Ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	691	68.7	69.2	69.2
Համաձայն եմ	227	22.6	22.7	91.9
Համաձայն չեմ	63	6.3	6.3	98.2
Բոլորովին համաձայն չեմ	18	1.8	1.8	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	7	0.7	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=1, Սիջիմը=1.41, Սեդիանը=1.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 4ը. Շատ դեպքերում, ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանություն

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	437	43.4	44.7	44.7
Համաձայն եմ	419	41.7	42.9	87.6
Համաձայն չեմ	90	8.9	9.2	96.8
Բոլորովին համաձայն չեմ	31	3.1	3.2	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	29	2.9	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=1, Սիջիմը=1.71, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 4թ. Ընտանեկան բռնությունը հասարակական խնդիր է և պետք է լուծվի կառավարության և հասարակության կողմից

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	184	18.3	19.7	19.7
Համաձայն եմ	416	41.4	44.5	64.2
Համաձայն չեմ	235	23.4	25.2	89.4
Բոլորովին համաձայն չեմ	99	9.8	10.6	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	72	7.2	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=2, Սիջիմը=2.27, Սեդիանը=2.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 4ժ. Հավանաբար ես կդիմեի ոստիկանություն, եթե ենթարկվեի ընտանեկան բռնության				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	113	11.2	12.3	12.3
Համաձայն եմ	211	21.0	23.0	35.3
Համաձայն չեմ	312	31.0	34.0	69.4
Բոլորովին համաձայն չեմ	281	27.9	30.6	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	89	8.8	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=3, Միջինը=2.83, Մեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 5. Կարծիքների միջին արժեքները՝ ներկայացված Աղյուսակներ 4ա-4ժ-ում (դասակարգված աճման կարգով)			
	Միջինը	Մոդան	Մեդիանը
Ամուսինը երբեք չպետք է խփի իր կնոջը:	1.41	1	1.00
Կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի՝ ընտանեկան բռնության դեմ պայքարելու համար:	1.65	1	2.00
Շատ դեպքերում, ընտանեկան բռնությունն ավելի լավ է լուծել տան ներսում, քան թե դիմել ոստիկանություն:	1.71	1	2.00
Հայաստանն ընտանեկան բռնության մասին օրենքի կարիք ունի:	1.91	2	2.00
Դատական համակարգը շատ քիչ բան է անում հետապնդվող կնոջը պաշտպանելու համար:	1.99	2	2.00
Ընտանեկան բռնությունը տարածված խնդիր է Հայաստանում:	2.09	2	2.00
Ընտանեկան բռնությունը հասարակական խնդիր է և պետք է լուծվի կառավարության և հասարակության կողմից:	2.27	2	2.00
Եթե ամուսինը կոպիտ է վերաբերվում իր կնոջը, ապա ընտանիքից դուրս մարդիկ պետք է միջամտեն:	2.54	3	3.00
Դա իմ գործը չէ, եթե ամուսինը տանը վեճի ընթացքում ֆիզիկապես բռնանում է իր կնոջ հանդեպ:	2.76	3	3.00
Հավանաբար ես կդիմեի ոստիկանություն, եթե ենթարկվեի ընտանեկան բռնության:	2.83	3	3.00

(1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 6ա. Վստահությունը կանանց ՀԿ-ների հանդեպ՝ ընտանեկան բռնության դեմ պայքարում				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Շատ վստահելի	102	10.1	15.4	15.4
Որոշ չափով վստահելի	329	32.7	49.5	64.9
Որոշ չափով ոչ վստահելի	90	8.9	13.6	78.5
Բոլորովին ոչ վստահելի	143	14.2	21.5	100.0
Զգիտեմ/չեմ կարող ասել	342	34.0	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=2, Միջինը=2.41, Սեդիանը=2.00 (1=շատ վստահելի և 4=բոլորովին ոչ վստահելի, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 6բ. Վստահությունը ոստիկանության հանդեպ՝ ընտանեկան բռնության դեմ պայքարում				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Շատ վստահելի	59	5.9	6.7	6.7
Որոշ չափով վստահելի	272	27.0	31.1	37.8
Որոշ չափով ոչ վստահելի	153	15.2	17.5	55.3
Բոլորովին ոչ վստահելի	391	38.9	44.7	100.0
Զգիտեմ/չեմ կարող ասել	131	13.0	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=4, Միջինը=3.00, Սեդիանը=3.00 (1=շատ վստահելի և 4=բոլորովին ոչ վստահելի, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 6գ. Վստահությունը դատարանների հանդեպ՝ ընտանեկան բռնության դեմ պայքարում				
	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Շատ վստահելի	135	13.4	15.5	15.5
Որոշ չափով վստահելի	378	37.6	43.5	59.0
Որոշ չափով ոչ վստահելի	105	10.4	12.1	71.1
Բոլորովին ոչ վստահելի	251	25.0	28.9	100.0
Զգիտեմ/չեմ կարող ասել	137	13.6	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=2, Միջինը=2.54, Սեդիանը=2.00 (1=շատ վստահելի և 4=բոլորովին ոչ վստահելի, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 6դ. Վստահությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հանդեպ՝ ընտանեկան բռնության դեմ պայքարում

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Շատ վստահելի	45	4.5	6.3	6.3
Որոշ չափով վստահելի	231	23.0	32.5	38.8
Որոշ չափով ոչ վստահելի	105	10.4	14.8	53.6
Բոլորովին ոչ վստահելի	330	32.8	46.4	100.0
Զգիտեմ/չեմ կարող ասել	295	29.3	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Մոդան=4, Միջինը=3.01, Սեդիանը=3.00 (1=շատ վստահելի և 4=բոլորովին ոչ վստահելի, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 7. Կարծիքների միջին արժեքները՝ ներկայացված Աղյուսակներ 6ա-6դ-ում (դասակարգված աճման կարգով)

	Միջինը	Մոդան	Սեդիանը
Կանանց ՀԿ-ները	2.41	2	2.00
Դատարանները	2.54	2	2.00
Ոստիկանությունը	3.00	4	3.00
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը	3.01	4	3.00

(1=շատ վստահելի և 4=բոլորովին ոչ վստահելի, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 8: Ով է ընտանիքում սովորաբար որոշում կայացնում հետևյալի մասին							
<i>(դասակարգված նվազման կարգով)</i>							
		հարցվածն ինքը	հարցվածն ամուսնու կան գուզը/նկերոջ հետ	ընտանիքի այլ անդամ(ներ), բացառությամբ հարցվածի	ընտանիքի բոլոր անդամները, ներառյալ հարցվածը	չգիտեմ/ չեմ կարող ասել	Ընդամենը
Ինչ ճաշ պատրաստել ամեն օր	Քանակը	744	52	119	84	7	1006
	տոկոսը	74.0	5.2	11.8	8.4	0.7	100.0
Տնային տնտեսության համար ամենօրյա զնունների կատարում	Քանակը	579	156	202	63	6	1006
	տոկոսը	57.6	15.5	20.1	6.3	0.6	100.0
Կանանց առողջության խնամքի հետ կապված հարցեր	Քանակը	386	349	198	62	11	1006
	տոկոսը	38.4	34.7	19.7	6.2	1.1	100.0
Քանի երեխա ունենալ	Քանակը	254	607	93	11	41	1006
	տոկոսը	25.2	60.3	9.2	1.1	4.1	100.0
Ինչպես օգտագործել կանանց կողմից վաստակած գումարը	Քանակը	251	325	206	48	176	1006
	տոկոսը	25.0	32.3	20.5	4.8	17.5	100.0
Այցելություններ ընտանիքին, ընկերներին կամ բարեկամներին	Քանակը	202	545	166	89	4	1006
	տոկոսը	20.1	54.2	16.5	8.9	0.4	100.0
Տնային տնտեսության համար խոշոր զնունների կատարում	Քանակը	173	435	299	89	10	1006
	տոկոսը	17.2	43.2	29.7	8.9	1.0	100.0

Աղյուսակ 9ա. Աղքատությունը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	538	53.5	54.4	54.4
Համաձայն եմ	321	31.9	32.5	86.9
Համաձայն չեմ	89	8.8	9.0	95.9
Բոլորովին համաձայն չեմ	41	4.1	4.1	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	17	1.7	100.0	
Ընդամենը	1006	100.0		

Սողան=1, Սիջիդը=1.63, Սեդիանը=3.00 (1=խիստ համաձայն եմ և 4=բոլորովին համաձայն չեմ, «չգիտեմ/չեմ կարող ասել» պատասխաններն ընդգրկված չեն)

Աղյուսակ 9բ. Տուժածի կրթության պակասը բարձրացնում է ընտանեկան բռնության հավանականությունը

	Քանակը	Տոկոսը	Իրական տոկոսը	Գումարային տոկոսը
Խիստ համաձայն եմ	320	31.8	33.2	33.2
Համաձայն եմ	376	37.4	39.0	72.2
Համաձայն չեմ	200	19.9	20.7	92.9
Բոլորովին համաձայն չեմ	68	6.8	7.1	100.0
Չգիտեմ/չեմ կարող ասել	42	4.2	100.0	
Ընդամենը	1006	100.0		

